

Մերկուրիի վերաբերյալ Մինամատայի կոնվենցիայի նախագիծը

Սույն Կոնվենցիայի Կողմերը,

Ճանաչելով, որ մերկուրին համաշխարհային մտահոգության քիմիական տարր է շնորհիվ իր մթնոլորտային հեռահար շարժի, իր կենսունակությանը շրջակա միջավայրում անթրոպոգեն եղանակով ներդրվելու պահից, էկոհամակարգերում կենսակուտակման իր ունակության և մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա իր լուրջ բացասական ազդեցությամբ,

Հիշեցնելով Միավորված ազգերի բնապահպանական ծրագրի Կառավարման խորհրդի 2009թ. փետրվարի 20-ի թիվ 25/5 որոշումը արդյունավետ, ծախսարդյունավետ և կոհերենք եղանակով մերկուրիի կառավարման միջազգային գործողություններ նախաձեռնելու նպատակով, *Հիշեցնելով*, որ Կայուն զարգացման Միավորված ազգերի խորհրդաժողովը վերահաստատել է Շրջակա միջավայրի և զարգացման Ռիոյի հռչակագրի սկզբունքները, այդ թվում՝ ընդհանուր, սակայն տարբերակված պարտականությունները և ճանաչելով Պետությունների առանձնահատուկ հանգամանքները և կարողությունները, ինչպես նաև համաշխարհային մակարդակում գործողությունների անհրաժեշտությունը,

Գիտակցելով առողջապահական մտահոգությունները, հատկապես՝ զարգացող պետություններում, որոնք հետևանք են այն բանի, որ խոցելի բնակչության, հատկապես՝ կանանց, երեխաների և, նրանց միջոցով, ապագա սերունդների համար առկա է մերկուրիի վտանգը,

Ճանաչելով Մինամատայի հիվանդության նշանակալի դասերը, հատկապես՝ մերկուրիի աղտոտվածության՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա ունեցած բացասական ազդեցությունը, ինչպես նաև մերկուրիի պատշաճ կառավարում ապահովելու անհրաժեշտությունը և նման իրադարձությունների կանխարգելումն ապագայում,

Ընդգծելով ֆինանսական, տեխնիկական, տեխնոլոգիական և կարողությունների ձևավորման ոլորտում օժանդակության կարևորությունը, հատկապես՝ զարգացող պետություններում և անցումային տնտեսություն ունեցող պետություններում՝ հզորացնելու մերկուրիի կառավարման ներպետական կարողությունները և խթանելու Կոնվենցիայի արդյունավետ կիրարկումը,

Ճանաչելով նաև Առողջության միջազգային կազմակերպության գործունեությունը մերկուրիի վնասակար ազդեցությունից մարդու առողջության պաշտպանության բնագավառում, ինչպես նաև համապատասխան բազմակողմ բնապահպանական համաձայնագրերի դերը, այդ թվում՝ Վտանգավոր թափոնների անդրսահմանային շարժի և տնօրինման վերահսկողության մասին Բազելի կոնվենցիայի և Միջազգային առևտրում հատուկ վտանգ ներկայացնող քիմիական տարրերի և

վնասատուների դեմ պայքարի միջոցների նախնական տեղեկացված համաձայնության ընթացակարգերի մասին Ռոտերդամի կոնվենցիայի, *Ճանաչելով*, որ սույն Կոնվենցիան և բնապահպանության և առևտրի ոլորտում միջազգային այլ համաձայնագրերը փոխլրացնող են, *Ընդգծելով*, որ սույն Կոնվենցիայի որևէ դրույթ չի կարող ազդել գործող միջազգային համաձայնագրերից և ոչ մեկով ամրագրված որևէ Կողմի իրավունքների և պարտականությունների վրա, *Գիտակցելով*, որ վերոգրյալ թվարկումը նպատակ չունի ստեղծելու աստիճանակարգ սույն Կոնվենցիայի և այլ միջազգային փաստաթղթերի միջև, *Նշելով*, որ սույն Կոնվենցիայի որևէ դրույթ չի արգելում Կողմերին ձեռնարկելու լրացուցիչ ներպետական միջոցներ, որոնք համահունչ են սույն Կոնվենցիային՝ պաշտպանելու մարդու առողջությունը և շրջակա միջավայրը մերկուրիի վնասակար ազդեցությունից՝ համաձայն Կողմերի՝ գործող միջազգային իրավունքով սահմանված այլ պարտավորությունների,

Համաձայնության եկան հետևյալի շուրջ.

Հոդված 1 Նպատակը

Սույն Կոնվենցիայի նպատակն է պաշտպանել մարդու առողջությունը և շրջակա միջավայրը մերկուրիի և մերկուրիի միացությունների անթրոպոգեն արտանետումներից և արտազատումներից:

Հոդված 2 Սահմանումներ

Սույն Կոնվենցիայի նպատակներից ելնելով.

ա/ “Ոսկու արհեստագործական և փոքրածավալ հանքահանություն” նշանակում է առանձին հանքարդյունահանողների կամ փոքր ձեռներեցների կողմից իրականացվող հանքահանություն սահմանափակ կապիտալ ներդրումներով և արտադրության ծավալներով,

բ/ “Առկա լավագույն մեթոդներն” այն մեթոդներն են, որոնք ամենաարդյունավետն են կանխարգելելու և, հնարավորության սահմաններում, նվազեցնելու մերկուրիի արտանետումներն ու արտազատումները օդի, ջրի և հողի մեջ ու դրանց ազդեցությունը ողջ շրջակա միջավայրի վրա՝ հաշվի առնելով տվյալ Կողմի կամ այդ Կողմի տարածքում գտնվող արդյունաբերության համար տնտեսական և տեխնիկական նկատառումները: Այս համատեքստում.

ի/ “Լավագույն” նշանակում է առավել արդյունավետը ողջ շրջակա միջավայրի ընդհանուր բարձր մակարդակի պաշտպանություն,

ii/ “Առկա” մեթոդները, տվյալ Կոդմի և այդ Կոդմի տարածքում գտնվող արդյունաբերության պարագայում մասշտաբային այն մեթոդներն են, որոնք թույլ են տալիս կիրարկումը տվյալ արդյունաբերական հատվածում տնտեսապես և տեխնիկապես կենսունակ պայմաններում՝ հաշվի առնելով ծախսերը և առավելությունները՝ անկախ այն հանգամանքից՝ արդյոք այդ մեթոդները կիրառվել կամ մշակվել են տվյալ Կոդմի տարածքում պայմանով, որ դրանք մատչելի են տվյալ արդյունաբերության օպերատորի համար, ինչպես կորոշի տվյալ Կոդմը, և

iii/ “Մեթոդները” ներառում են կիրառվող տեխնոլոգիաները, գործառական կարգերը և այն եղանակները, որոնցով նախագծվում, կառուցվում, պահպանվում և ապամոնտաժվում են կայանքները,

գ/ “Լավագույն բնապահպանական գործելակարգեր” նշանակում է բնապահպանական հսկողության առավել համապատասխան միջոցների և ստրատեգիաների համակցություն,

դ/ “Մերկուրի” նշանակում է մերկուրի տարրը (Hg(0), CAS No. 7439-97-6),

ե/ “Մերկուրիի համակցություն” նշանակում է նյութ՝ բաղկացած մերկուրիի ատոմներից և այլ քիմիական տարրերի մեկ կամ ավելի ատոմներից, որոնք կարելի է բաժանել տարբեր բաղադրիչների միայն քիմիական ռեակցիաների միջոցով,

զ/ “Մերկուրիի հավելիչներով արտադրանք” նշանակում է արտադրանք կամ արտադրանքի բաղադրիչ, որը պարունակում է մերկուրի կամ մերկուրիի համակցություն, որն ավելացվել է դիտավորյալ,

է/ “Կոդմ” նշանակում է պետություն կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն, որը համաձայնել է, որ Կոնվենցիան իր համար պարտադիր ուժ ունենա և որի համար Կոնվենցիան ուժի մեջ է,

ը/ “Ներկա և քվեարկող Կոդմեր” նշանակում է Կոդմեր, որոնք ներկա են կամ Կոդմերի հանդիպմանը քվեարկում են կողմ կամ դեմ,

թ/ “Մերկուրիի առաջնային հանքարդյունաբերություն” նշանակում է հանքարդյունաբերություն, որտեղ փնտրվող հիմնական նյութը մերկուրին է,

ժ/ “Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն” նշանակում է կազմակերպություն, որը ձևավորվել է տվյալ տարածաշրջանի սուվերեն պետությունների կողմից, որին անդամ պետությունները փոխանցել են իրենց իրավասությունները սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերում և որը պատշաճ կարգով լիազորված է, համաձայն իր ներքին ընթացակարգերի, ստորագրելու, վավերացնելու, ընդունելու, հաստատելու կամ միանալու սույն Կոնվենցիային և

ի/ “Կիրառությունը թույլատրելի է” նշանակում է մերկուրիի կամ մերկուրիի միացությունների կիրառությունը Կոդմի կողմից՝ համաձայն սույն Կոնվենցիայի, ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝ այն կիրառություններով, որոնք համահունչ են 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներին:

Հոդված 3

Մերկուրիի մատակարարման աղբյուրները և առևտուրը

1. Սույն հոդվածի նպատակներից ելնելով.

ա/ Հղումները “մերկուրիին” ներառում են մերկուրիի և այլ նյութերի խառնուրդներ, այդ թվում՝ մերկուրիի համաձուլվածքներ, որտեղ մերկուրիի խտությունը կազմում է ընդհանուր կշռի 95 տոկոսը,

բ/ “Մերկուրիի միացություններ” նշանակում է մերկուրիի (I), քլորիդ (նաև հայտնի որպես կալոմել), մերկուրիի (II) օքսիդ, մերկուրիի (II) սուլֆատ, մերկուրիի (II) նիտրատ, կինաբարիս և մերկուրիի սուլֆիդ:

2. Սույն հոդվածի դրույթները չեն վերաբերում.

ա/ Մերկուրիի կամ մերկուրիի միացությունների այն քանակներին, որոնք օգտագործվելու են լաբորատոր հետազոտություններում կամ որպես էտալոնային չափորոշիչ կամ

բ/ Մերկուրիի կամ մերկուրիի միացությունների՝ բնական եղանակով հայտնաբերվող հետքերին, որոնք առկա են մերկուրի չպարունակող մետաղներում, երկաթաքարերում կամ հանքանյութերում, այդ թվում՝ ածուխը կամ այդ նյութերից առաջացող արտադրանքը և պատահական հետքաքանակները քիմիական արտադրանքում կամ

գ/ Մերկուրիի հավելիչներով արտադրանքում:

3. Կողմերից յուրաքանչյուրը չի թույլատրում մերկուրիի առաջնային հանքարդյունաբերություն, եթե այն արդեն իսկ չի իրականացվում իր տարածքում սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու պահին:

4. Կողմերից յուրաքանչյուրը թույլ է տալիս մերկուրիի առաջնային հանքարդյունաբերություն, եթե այն արդեն իսկ իրականացվում է իր տարածքում սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու պահից մինչև տասնհինգ տարի դրանից հետո ընկած ժամանակահատվածում: Այդ ընթացքում այդ հանքարդյունաբերությունից ստացված մերկուրին օգտագործվում է միայն մերկուրիի հավելիչներով ստացված արտադրության մեջ՝ համաձայն 4-րդ հոդվածի, արտադրական գործընթացներում՝ համաձայն 5-րդ հոդվածի կամ տնօրինվում՝ համաձայն 11-րդ հոդվածի՝ կիրառելով գործողություններ, որոնք չեն հանգեցնում վերականգնման, թափոնների մշակման, ուղղակի կիրառության կամ այլընտրանքային կիրառությունների:

5. Կողմերից յուրաքանչյուրը.

ա/ պետք է փորձի հայտնաբերել մերկուրիի կամ մերկուրիի միացությունների պաշարներ, որոնք գերազանցում են 50 մետրական տոննան, ինչպես նաև մերկուրիի մատակարարման աղբյուրներ, որոնք առաջացնում են տարեկան 10 մետրական տոննան գերազանցող պաշարներ իր տարածքում,

բ/ ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու, որ այն պարագայում, երբ Կողմը որոշում է, որ առկա է քլոր-ալկալիական արտադրությունների

ապամոնտաժումից ավելացած մերկուրի, այդ մերկուրին կոնօրինվի համաձայն 11-րդ հոդվածի 3 (ա) պարբերության:

6. Կողմերից յուրաքանչյուրը չի թույլատրում մերկուրիի արտահանում, բացառությամբ.

ա/ այն Կողմին, որն արտահանող Կողմին տրամադրել է գրավոր համաձայնություն և միայն հետևյալ նպատակներով.

i/ այն կիրառության, որը թույլ է տրված ներկրող Կողմին սույն Կոնվենցիայով կամ

ii/ Շրջակա միջավայրին չվնասող միջանկյալ պահպանման համար՝ համաձայն 10-րդ հոդվածի կամ

բ/ Կողմ չհանդիսացող սուբյեկտին, որն արտահանող Կողմին տրամադրել է գրավոր համաձայնություն, այդ թվում՝ հավաստագիր առ այն, որ.

i/ Կողմ չհանդիսացող սուբյեկտը ձեռնարկել է միջոցներ՝ ապահովելու մարդու առողջության ու շրջակա միջավայրի պաշտպանությունը, ինչպես նաև ապահովելու դրա համապատասխանությունը 10-րդ և 11-րդ հոդվածների դրույթներին և

ii/ Այդ մերկուրին օգտագործվելու է միայն այն կիրառության համար, որը թույլ է տրված Կողմին սույն Կոնվենցիայով կամ շրջակա միջավայրին չվնասող միջանկյալ պահպանման համար՝ համաձայն 10-րդ հոդվածի:

7. Արտահանող Կողմը կարող է հղում կատարել Քարտուղարությանն ընդհանուր կարգով ներկրող Կողմի կամ Կողմ չհանդիսացող սուբյեկտի ծանուցմանը որպես գրավոր համաձայնություն, որը պահանջվում է 6-րդ պարբերությամբ: Կողմը կամ Կողմ չհանդիսացող սուբյեկտը կարող է ցանկացած պահի չեղյալ հայտարարել ծանուցումը: Քարտուղարությունը պահում է բոլոր այդօրինակ ծանուցումների հանրային ռեգիստր:

8. Կողմերից յուրաքանչյուրը չի թույլատրում մերկուրիի ներկրում Կողմ չհանդիսացող սուբյեկտից, որին տալիս է իր գրավոր համաձայնությունը, եթե Կողմ չհանդիսացող սուբյեկտը չի ներկայացնում հավաստագիր առ այն, որ մերկուրին 3-րդ կամ 5(բ)-րդ պարբերությամբ անթույլատրելի հոչակված աղբյուրներից չէ:

9. Կողմը, որն ընդհանուր կարգով համաձայնության ծանուցում է ներկայացնում 7-րդ պարբերությամբ սահմանված կարգով, կարող է որոշել չկիրառել 8-րդ պարբերությունը պայմանով, որ այն կիրառում է համապարփակ սահմանափակումներ մերկուրիի արտահանման հարցում և ձեռնարկել է ներպետական միջոցներ՝ ապահովելու, որ ներկրված մերկուրին կառավարվի շրջակա միջավայրին չվնասող եղանակով: Կողմը նման որոշման ծանուցում է ներկայացնում Քարտուղարությանը, ներառյալ՝ տեղեկատվություն արտահանման իր սահմանափակումների և կարգավորման ներպետական միջոցների մասին, ինչպես նաև տեղեկատվություն Կողմ չհանդիսացող սուբյեկտներից ներկրվող մերկուրիի քանակի և ծագման երկրի մասին: Քարտուղարությունը վարում է բոլոր այդօրինակ ծանուցումների հրապարակային ռեգիստր: Կիրարկման

և համապատասխանության կոմիտեն վերանայում և գնահատում է բոլոր այդ ծանուցումները և օժանդակ տեղեկատվությունը համաձայն 15-րդ հոդվածի և պատշաճ կարգով առաջարկություններ ներկայացնում Կողմերի խորհրդածոդովին:

10. 9-րդ պարբերությունում նկարագրված ընթացակարգը կիրառվում է նախքան Կողմերի խորհրդածոդովի երկրորդ հանդիպումը: Դրանից հետո այն չի կիրառվի, եթե Կողմերի խորհրդածոդովն այլ բան չորոշի ներկա և քվեարկող Կողմերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ այն Կողմի առնչությամբ, որը ծանուցում է ներկայացրել 9-րդ պարբերության համաձայն նախքան Կողմերի խորհրդածոդովի երկրորդ հանդիպման ավարտը:

11. Կողմերից յուրաքանչյուրը 21-րդ հոդվածի համաձայն ներկայացված իր հաշվետվություններում ներառում է տեղեկատվություն այն մասին, որ սույն հոդվածի պահանջները բավարարված են:

12. Կողմերի խորհրդածոդովն իր առաջին հանդիպման ժամանակ լրացուցիչ ուղենիշներ է ներկայացնում սույն հոդվածի, հատկապես՝ 5 (ա), 6-րդ և 8-րդ պարբերությունների վերաբերյալ և մշակում և ընդունում է 6(բ) և 8-րդ հոդվածների հավաստագրման պահանջվող բովանդակությունը:

13. Կողմերի խորհրդածոդովը գնահատում է, թե արդյոք առանձին մերկուրիի միացությունների առևտուրը բացասաբար է անդրադառնում սույն Կոնվենցիայի նպատակի վրա և քննության առնում այն հարցը, թե արդյոք մերկուրիի առանձին միացությունների վրա, ընդունված 27-րդ հոդվածի Հավելվածի թվարկման համաձայն, պետք է տարածվեն 6-րդ և 8-րդ պարբերությունները:

Հոդված 4

Մերկուրիի հավելիչներով արտադրանք

1. Կողմերից յուրաքանչյուրը, համապատասխան միջոցներ ձեռնարկելու միջոցով, թույլ չի տալիս Ա Հավելվածի I մասում թվարկված մերկուրիի հավելիչներով արտադրանքի ստեղծումը, ներկրումը կամ արտահանումը այդ արտադրանքի կրճատման համար նախատեսված ժամկետից հետո, եթե, իհարկե, Ա Հավելվածը բացառություն չի նախատեսում կամ Կողմը չի գրանցել բացառություն՝ համաձայն 6-րդ հոդվածի:
2. Կողմը, որպես այլընտրանք 1-ին պարբերությանը, կարող է Ա Հավելվածում փոփոխության վավերացման կամ ուժի մեջ մտնելու ժամանակ մատնանշել, որ իրականացնելու է տարբեր միջոցառումներ կամ ստրատեգիաներ՝ անդրադառնալու Ա Հավելվածի I մասում թվարկված արտադրանքին: Կողմը կարող է ընտրել այս այլընտրանքը միայն եթե կարող է ապացուցել, որ արդեն իսկ նվազագույնի է հասցրել Ա Հավելվածի I մասում թվարկված արտադրանքի գերակշիռ մեծամասնության արտադրությունը, ներկրումը և արտահանումը և որ ձեռնարկել է միջոցներ կամ

ստրատեգիաներ՝ նվազեցնելու մերկուրիի օգտագործումը Ա Հավելվածի I մասում չթվարկված հավելյալ արտադրանքում այն ժամանակ, երբ այն ծանուցում է Քարտուղարությանը տվյալ այլընտրանքից օգտվելու իր որոշման մասին: Ի լրումն սրա՝ տվյալ այլընտրանքն ընտրող Կողմը պետք է.

ա/ առաջին հնարավորության դեպքում զեկուցի Կողմերի խորհրդածոդովին իրականացված միջոցառումների և ստրատեգիաների, այդ թվում՝ կրճատված քանակների մասին,

բ/ կիրառի միջոցներ կամ ստրատեգիաներ՝ կրճատելու մերկուրիի օգտագործումը Ա Հավելվածի I մասում թվարկված այն արտադրանքում, որի համար դեռևս ձեռք չի բերվել նվազագույն արժեք,

գ/ Քննության առնի լրացուցիչ միջոցներ՝ հասնելու ավելի մեծ կրճատումների և

դ/ Իրավունք չունենա վկայակոչելու բացառություններ համաձայն 6-րդ հոդվածի արտադրանքի յուրաքանչյուր դասի համար, որի համար ընտրվել է տվյալ այլընտրանքը:

Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո 5 տարուց ոչ ուշ Կողմերի խորհրդածոդովը, որպես 8-րդ պարբերությամբ նախատեսված վերանայման գործընթացի մաս, կվերանայի սույն պարբերության համաձայն ձեռնարկված միջոցների առաջընթացն ու արդյունավետությունը:

3. Յուրաքանչյուր կողմ ձեռնարկում է միջոցներ Ա Հավելվածի II մասում թվարկված մերկուրիի հավելիչներով արտադրանքի համար՝ համաձայն դրանում սահմանված դրույթների:
4. Քարտուղարությունը պետք է Կողմերի տրամադրած տեղեկատվության հիման վրա հավաքի ու պահպանի տեղեկատվություն մերկուրիի հավելիչներով արտադրանքի կամ դրանց այլընտրանքների վերաբերյալ և հրապարակային դարձնի այդ տեղեկությունները: Քարտուղարությունը պետք է նաև հրապարակային դարձնի Կողմերի ներկայացրած այլ վերաբերելի տեղեկությունները:
5. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է միջոցներ կանխելու հավաքովի արտադրանքում մերկուրիի հավելիչներով այնպիսի մասեր ավելացնելուց, որոնց արտադրությունը, ներկրումը և արտահանումը թույլատրելի չէ սույն հոդվածի համաձայն:
6. Յուրաքանչյուր Կողմ չի խրախուսում առևտրում մերկուրիի հավելիչներով ապրանքների արտադրություն և տարածում, որոնց վրա չի տարածվում մերկուրիի հավելիչներով արտադրանքի որևէ հայտնի կիրառություն նախքան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը, եթե տվյալ արտադրանքի ռիսկերի և առավելությունների գնահատումը չի ապացուցում, որ առկա են առավելություններ շրջակա միջավայրի և մարդու առողջության համար: Կողմը պատշաճ կարգով Քարտուղարությանը տրամադրում է

տեղեկություններ ցանկացած նման արտադրանքի մասին, այդ թվում՝ տեղեկություններ արտադրանքի՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության համար ունեցած ռիսկերի և առավելությունների մասին: Քարտուղարությունը հրապարակային է դարձնում այդ տեղեկատվությունը:

7. Կողմերից յուրաքանչյուրը կարող է առաջարկություն ներկայացնել Քարտուղարությանը մերկուրիի հավելիչներով արտադրանքը Հավելված Գ-ում ներառելու մասին, որը պետք է պարունակի տեղեկատվություն դրա մատչելիության, տեխնիկական և տնտեսական իրագործելիության և արտադրանքի՝ մերկուրի չպարունակող հավելիչների՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության համար ունեցած ռիսկերի և առավելությունների մասին՝ հաշվի առնելով 4-րդ պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը:
8. Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց ոչ ուշ քան հինգ տարի անց, Կողմերի խորհրդաժողովը վերանայում է Հավելված Ա-ն և կարող է քննության առնել այդ Հավելվածում փոփոխություններ կատարելու հարցը՝ համաձայն 27-րդ հոդվածի:
9. 8-րդ պարբերության համաձայն Հավելված Ա-ն վերանայելիս Կողմերի խորհրդաժողովը հաշվի է առնում առնվազն.
 - a. 7-րդ պարբերության համաձայն արված ցանկացած առաջարկություն,
 - b. 4-րդ պարբերության համաձայն տրամադրած տեղեկատվությունը և
 - c. արդյոք Կողմերի տրամադրության տակ կան մերկուրի չպարունակող այլընտրանքներ, որոնք տեխնիկապես և տնտեսապես իրագործելի են՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի և մարդու առողջության համար առկա ռիսկերն ու առավելությունները:

Հոդված 5

Արտադրական գործընթացներ, որոնցում օգտագործվում են մերկուրի կամ մերկուրիի միացություններ

1. Սույն հոդվածի և Հավելված Բ-ի նպատակներից ելնելով՝ այն արտադրական գործընթացները, որոնցում օգտագործվում են մերկուրի կամ մերկուրիի միացություններ, չեն ներառում այն գործընթացները, որոնցում օգտագործվում է մերկուրիի հավելիչներով արտադրանք, գործընթացներ մերկուրիի հավելիչներով արտադրության համար կամ գործընթացներ, որոնք ուղղված են մերկուրի պարունակող թափոնների մշակմանը:
2. Յուրաքանչյուր Կողմ, համապատասխան միջոցներ ձեռնարկելու միջոցով, չի թույլատրում մերկուրիի կամ մերկուրիի միացությունների օգտագործումը Հավելված Բ-ի I Մասում

թվարկված արտադրական գործընթացներում տվյալ Հավելվածում առանձին գործընթացների համար մատնանշված դադարեցման ժամկետից հետո, եթե Կողմը չունի գրանցված բացառություն՝ համաձայն 6-րդ հոդվածի:

3. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է միջոցներ՝ սահմանափակելու մերկուրիի կամ մերկուրիի հավելիչների օգտագործումը Հավելված Բ-ի I Մասում թվարկված արտադրական գործընթացներում տվյալ մասի դրույթներին համապատասխան:
4. Քարտուղարությունը, Կողմերի տրամադրած տեղեկատվության հիման վրա, հավաքում և պահպանում է տեղեկատվություն այն գործընթացների մասին, որոնք օգտագործում են մերկուրի կամ մերկուրիի միացություններ և դրանց այլընտրանքները և հրապարակային է դարձնում այդ տեղեկատվությունը: Կողմերը կարող են ներկայացնել նաև այլ վերաբերելի տեղեկատվություն, ինչը ևս պետք է հրապարակային դարձվի Քարտուղարության կողմից:
5. Յուրաքանչյուր Կողմ, որն ունի արդյունաբերություն, որտեղ Հավելված Բ-ում թվարկված արտադրական գործընթացներում օգտագործվում է մերկուրի կամ մերկուրիի միացություն.
 - a. Ձեռնարկում է միջոցներ՝ լուծելու այդ արդյունաբերության մերկուրիի կամ մերկուրիի միացությունների թափոնների և արտանետումների հարցը,
 - b. 21-րդ հոդվածի համաձայն ներկայացված իր հաշվետվություններում ներառում է տեղեկատվություն սույն պարբերության համաձայն ձեռնարկված միջոցառումների մասին,
 - c. ջանում է իր տարածքում բացահայտել այն արդյունաբերությունները, որտեղ Հավելված Բ-ում թվարկված գործընթացների համար օգտագործվում է մերկուրի կամ մերկուրիի միացություններ և Քարտուղարություն է ներկայացնում սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ քան 3 տարվա ընթացքում տեղեկատվություն նման արդյունաբերությունների թվի և տեսակների, ինչպես նաև այդ արդյունաբերություններում մերկուրիի և մերկուրիի միացությունների քանակի տարեկան հաշվարկի մասին: Քարտուղարությունը հրապարակային է դարձնում այդ տեղեկատվությունը:
6. Յուրաքանչյուր Կողմ չի թույլատրում մերկուրիի կամ մերկուրիի միացությունների օգտագործումը այնպիսի արդյունաբերության մեջ, որը գոյություն չի ունեցել նախքան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը՝ օգտագործելու Հավելված Բ-ում թվարկված արտադրական գործընթացները: Այդ արդյունաբերություններում բացառությունները կիրառելի չեն:
7. Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է որևէ արդյունաբերության զարգացումը, որում կօգտագործվեն արտադրական գործընթացներ

մերկուրիի կամ մերկուրիի միացությունների դիտավորյալ կիրառությամբ, որոնք չէին օգտագործվում սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց առաջ, բացառությամբ այն դեպքերի, երբ Կողմը կարող է Կողմերի խորհրդատուական համոզիչ կերպով ապացուցել, որ արտադրական գործընթացը առաջարկում է նշանակալի առավելություններ շրջակա միջավայրի և մարդու առողջության համար և որ չկան տեխնիկապես և տնտեսապես իրագործելի մերկուրի չպարունակող այլընտրանքներ, որոնք նման առավելություններ են առաջարկում:

8. Կողմերը խրախուսվում են փոխանակել տեղեկատվություն համապատասխան նոր տեխնոլոգիական զարգացումների, մերկուրի չպարունակող տնտեսապես և տեխնիկապես իրագործելի այլընտրանքների, ինչպես նաև այնպիսի հավանական միջոցների և մեթոդների մասին, որոնք թույլ են տալիս կրճատել և հնարավորության դեպքում նաև վերացնել մերկուրիի և մերկուրի պարունակող միացությունների օգտագործումը, ինչպես նաև մերկուրիի և մերկուրի պարունակող արտանետումները և արտազատումները Հավելված Բ-ում թվարկված արտադրական գործընթացներում:
9. Յուրաքանչյուր Կողմ կարող է առաջարկություն ներկայացնել Հավելված Բ-ում փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ ներառելու այնպիսի արտադրական գործընթաց, որում օգտագործվում է մերկուրի կամ մերկուրիի միացություն: Այն պետք է պարունակի տեղեկատվություն գործընթացի՝ մերկուրի չպարունակող այլընտրանքների մատչելիության, տեխնիկական և տնտեսական իրագործելիության, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության համար ունեցած ռիսկերի և առավելությունների վերաբերյալ:
10. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց ոչ ուշ քան հինգ տարի հետո Կողմերի խորհրդատուական վերանայում է Հավելված Բ-ն և քննության առնում նրանում փոփոխություններ կատարելու հարցը՝ համաձայն 27-րդ հոդվածի:
11. 10-րդ պարբերության համաձայն իրականացվող Հավելված Բ-ի ցանկացած վերանայման պարագայում Կողմերի խորհրդատուական հաշվի է առնում.
 - a. 9-րդ հոդվածի համաձայն ներկայացված ցանկացած առաջարկություն,
 - b. 4-րդ պարբերության համաձայն մատչելի տեղեկատվությունը և
 - c. Կողմերի համար մերկուրի չպարունակող այնպիսի այլընտրանքների առկայությունը, որոնք տեխնիկապես և տնտեսապես իրագործելի են՝ հաշվի առնելով ռիսկերը և առավելությունները մարդու առողջության և շրջակա միջավայրի համար:

Հոդված 6

Խնդրանքի դեպքում Կողմին տրամադրվող բացառությունները

1. Ցանկացած պետություն կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն կարող է գրանցել մեկ կամ ավելի բացառություններ Հավելվածներ Ա-ում և Բ-ում թվարկված դադարեցման ժամկետներից՝ այսուհետ՝ “բացառություններ” գրավոր ծանուցելով Քարտուղարությանը.

a. Սույն Կոնվենցիայի Կողմ դառնալու մասին կամ

b. Հավելված Ա-ին փոփոխության միջոցով ավելացվող ցանկացած մերկուրիի հավելիչներով արտադրանքի կամ Հավելված Բ-ի փոփոխության միջոցով ավելացվող մերկուրիի կիրառությամբ ցանկացած արտադրության դեպքում ոչ ուշ, քան վերաբերելի փոփոխությունը կմտնի ուժի մեջ:

Ցանկացած նման գրանցում ուղեկցվում է հայտարարությամբ, որտեղ բացատրվում է, թե ինչու Կողմն ունի նման բացառության կարիք:

2. Բացառությունը կարող է գրանցվել Ա կամ Բ Հավելվածներում թվարկված դասերի կամ որևէ պետության կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության մատնանշած ենթադասերի համար:

3. Յուրաքանչյուր Կողմ, որն ունի մեկ կամ ավելի բացառություններ, պետք է ներառվի ռեգիստրում: Քարտուղարությունը ստեղծում և վարում է ռեգիստրը և հրապարակային դարձնում այն:

4. Ռեգիստրը ներառում է.

a. Այն Կողմերի ցանկը, որոնք ունեն մեկ կամ ավելի բացառություններ,

b. Կողմերից յուրաքանչյուրի առնչությամբ գրանցված բացառությունը կամ բացառությունները և

c. Յուրաքանչյուր բացառության վերջնաժամկետը:

5. Եթե Կողմը ռեգիստրում չի մատնանշում ավելի կարճ ժամկետ, 1-ին պարբերության համաձայն արված բոլոր բացառությունները լրանում են Ա կամ Բ Հավելվածներում մատնանշված կրճատման օրվանից հինգ տարի անց:

6. Կողմերի խորհրդածոդովը կարող է Կողմի խնդրանքով որոշել երկարաձգել բացառությունը հինգ տարով, եթե Կողմն ավելի կարճ ժամկետ չի խնդրել: Իր որոշումը կայացնելիս Կողմերի խորհրդածոդովը պետք է պատշաճորեն հաշվի առնի.

a. Կողմի հաշվետվությունը, որով վերջինս խնդրում է երկարաձգել բացառությունը և ուրվագծում ձեռնարկված և ծրագրված գործողությունները, որոնք ուղղված են հնարավորինս արագ բացառության կարիքը վերացնելուն,

- b. Հասանելի տեղեկատվությունը, այդ թվում՝ այլընտրանքային այն արտադրանքի և գործընթացների մատչելիության վերաբերյալ, որոնք չեն պարունակում մերկուրի կամ ենթադրում են պակաս մերկուրիի սպառում քան բացառության կարգով օգտագործումը և
- c. Ծրագրված կամ իրականացվող գործողությունները, որոնք միտված են մերկուրիի՝ շրջակա միջավայրի համար վտանգ չներկայացնող սպառմամբ և մերկուրիի թափոնների տնօրինմամբ:

Բացառությունը կարող է երկարաձգվել միայն մեկ անգամ մեկ արտադրանքի առնչությամբ՝ ըստ դադարեցման ժամկետի:

- 7. Կողմը կարող է ցանկացած ժամանակ հրաժարվել բացառությունից՝ այդ մասին գրավոր ծանուցելով Քարտուղարությանը: Բացառությունից հրաժարումը ուժի մեջ է մտնում ծանուցման մեջ նշված պահից:
- 8. Անկախ 1-ին պարբերությունից՝ որևէ պետություն կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն չի կարող գրանցել բացառություն Ա կամ Բ Հավելվածներում մատնանշված որևէ արտադրանքի կամ գործընթացի համար դադարեցման ժամկետից հինգ տարի անց, եթե Կողմերից մեկը կամ ավելին չեն մնում գրանցված տվյալ արտադրանքի կամ գործընթացի բացառության համար՝ ստանալով երկարաձգում համաձայն 6-րդ պարբերության: Այդ դեպքում պետությունը կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունը կարող է 1(ա) և (բ) պարբերություններում սահմանված ժամկետներում գրանցել բացառություն տվյալ արտադրանքի կամ գործընթացի համար, որը լրանում է համապատասխան կրճատման օրվանից տասը տարի անց:
- 9. Որևէ Կողմ չի կարող տասը տարուց հետո ունենալ ուժի մեջ գտնվող բացառություն Ա կամ Բ Հավելվածներում թվարկված որևէ արտադրանքի կամ գործընթացի դադարեցման ժամկետից հետո:

Հոդված 7

Ոսկու արհեստագործական և փոքրածավալ հանքահանություն

- 1. Սույն հոդվածի կամ Հավելված Գ-ի միջոցառումները վերաբերում են ոսկու արհեստագործական և փոքրածավալ հանքահանությանը և մշակմանը, որտեղ օգտագործվում են մերկուրիի ամալգամներ երկաթաքարից ոսկի ստանալու համար:
- 2. Յուրաքանչյուր Կողմ, որի տարածքում սույն հոդվածի համաձայն տեղի է ունենում ոսկու արհեստագործական և փոքրածավալ հանքահանություն, պետք է ձեռնարկի քայլեր նվազեցնելու, իսկ հնարավորության դեպքում նաև վերացնելու մերկուրիի և մերկուրիի միացությունների օգտագործումը և մերկուրիի արտանետումները և

արտագատումները շրջակա միջավայր նմանօրինակ հանքահանությունից և մշակումից:

3. Յուրաքանչյուր Կողմ ծանուցում է Քարտուղարությանը եթե որևէ ժամանակ Կողմը որոշում է, որ ոսկու արհեստագործական և փոքրածավալ հանքահանությունը և մշակումն իր տարածքում աննշանից ավելին է: Եթե Կողմն այդպես է որոշում, վերջինս պետք է.
 - a. Համաձայն Գ Հավելվածի՝ մշակի և իրականացնի գործողությունների ազգային ծրագիր,
 - b. Իր տարածքում Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան երեք տարվա ընթացքում կամ Քարտուղարությանը ծանուցելուց հետո երեք տարվա ընթացքում ներկայացնի իր գործողությունների ազգային ծրագիրը Քարտուղարությանը և
 - c. Դրանից հետո երեք տարին մեկ վերանայի սույն հոդվածով սահմանված իր պարտավորությունների կատարումը և ներառի այդ վերանայումները 21-րդ հոդվածի համաձայն ներկայացրած իր զեկույցներում:
4. Կողմերը կարող են ըստ անհրաժեշտության համագործակցել մեկմեկու և համապատասխան միջկառավարական կազմակերպությունների և այլ միավորների հետ՝ հասնելու սույն հոդվածով սահմանված նպատակներին: Այդ համագործակցությունը կարող է ներառել.
 - a. Ստրատեգիաների մշակում՝ կանխարգելելու ոսկու արհեստագործական և փոքրածավալ հանքահանության մեջ մերկուրիի և մերկուրիի միացությունների օգտագործումից բացի որևէ այլ կիրառության շեղումներ,
 - b. Կրթական, իրազեկման և կարողությունների ձևավորման նախաձեռնություններ,
 - c. Գիտական հետազոտությունների զարգացումը մերկուրի չպարունակող կայուն այլընտրանքային գործելակարգերի ուղղությամբ,
 - d. Տեխնիկական և ֆինանսական աջակցության տրամադրում,
 - e. Գործընկերությունների կազմավորում հանուն սույն հոդվածով ստանձնած պարտավորությունների կատարման և
 - f. Տեղեկատվության փոխանակման առկա մեխանիզմների կիրառումը խթանելու գիտելիքը, լավագույն բնապահպանական գործելակարգերը և բնապահպանական, տեխնիկական, սոցիալական և տնտեսական տեսանկյունից կենսունակ այլընտրանքային տեխնոլոգիաները:

Հոդված 8

Արտանետումները

1. Սույն հոդվածը վերաբերում է մերկուրիի և մերկուրիի միացությունների, որոնք հաճախ կոչվում են “մերկուրիի

ամբողջություն” դեպի մթնոլորտ արտանետումների հսկողությանը և, հնարավորության դեպքում, նաև կրճատմանը այնպիսի միջոցառումներով, որոնք ուղղված են Հավելված Դ-ի աղբյուրների դասերի շրջանակում տեղավորվող սկզբնաաղբյուրներից արտանետումների հսկողությանը:

2. Սույն հոդվածի նպատակներից ելնելով.
 - a. “Արտանետումներ” նշանակում է դեպի մթնոլորտ մերկուրիի և մերկուրիի միացությունների արտանետումներ,
 - b. “Համապատասխան աղբյուր” նշանակում է աղբյուր, որը տեղավորվում է Հավելված Դ-ում թվարկված աղբյուրի դասերից որևէ մեկի շրջանակներում: Կողմը կարող է ցանկության դեպքում սահմանել չափորոշիչներ Հավելված Դ-ում ներառված աղբյուրի դասի որոշարկման համար, եթե որևէ դասի համար մշակված այդ չափորոշիչները ներառում են այդ դասի արտանետումների առնվազն 75 տոկոսը,
 - c. “Նոր աղբյուր” նշանակում է որևէ համապատասխան աղբյուր Հավելված Դ-ում ներառված դասից, որի կառուցումը կամ էական ձևափոխումը սկսվում է հետևյալ ժամկետներից առնվազն մեկ տարի անց.
 - i. Տվյալ Կողմի համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը կամ
 - ii. Տվյալ Կողմի համար Դ Հավելվածում փոփոխության ուժի մեջ մտնելը, որով աղբյուրի վրա միայն այդ փոփոխության ուժով տարածվում են սույն Կոնվենցիայի դրույթները,
 - d. “Էական ձևափոխում” նշանակում է համապատասխան աղբյուրի ձևափոխումը, որի արդյունքում զգալիորեն մեծանում են արտանետումները, ինչը բացառում է արտանետումների փոփոխությունը օժանդակ արտադրանքի վերականգնման արդյունքում: Կողմը պետք է որոշի, թե արդյոք ձևափոխումն զգալի է, թե ոչ:
 - e. “Առկա աղբյուր” նշանակում է ցանկացած համապատասխան աղբյուր, որը նոր աղբյուր չէ,
 - f. “Արտանետումների սահմանային արժեքը” նշանակում է մերկուրիի կամ մերկուրիի միացությունների խտության, զանգվածի կամ արտանետումների տոկոսների սահմանաչափ, ինչը հաճախ արտահայտվում է որպես “ամբողջական մերկուրի,” որն արտանետվում է սկզբնաաղբյուրից:
3. Համապատասխան աղբյուրներով Կողմը ձեռնարկում է միջոցներ վերահսկելու արտանետումները և կարող է մշակել ազգային ծրագիր, որով կնախատեսվեն միջոցառումներ արտանետումների վերահսկողության և ակնկալվող թիրախների, նպատակների և արդյունքների նախանշման համար: Որևէ ազգային ծրագիր

ներկայացվում է Կողմերի խորհրդածողովին այդ Կողմի համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո չորս տարվա ընթացքում: Եթե կողմը մշակում է ծրագրի իրագործման պլան համաձայն 20-րդ հոդվածի, Կողմը կարող է դրանում ներառել սույն պարբերության համաձայն մշակված ծրագիրը:

4. Իր նոր աղբյուրների համար Կողմերից յուրաքանչյուրը պահանջում է առկա լավագույն մեթոդների և լավագույն բնապահպանական գործելակարգերի կիրառությունը՝ վերահսկելու և, հնարավորության դեպքում, նաև կրճատելու արտանետումները հնարավորինս արագ, սակայն ոչ ուշ, քան տվյալ Կողմի համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում: Կողմը կարող է օգտագործել արտանետումների սահմանային արժեքները, որոնք համահունչ են գործող լավագույն մեթոդներին:
5. Իր գործող աղբյուրների համար Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ազգային ծրագրում ներառում և իրագործում է հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝ հաշվի առնելով իր ազգային հանգամանքները և տնտեսական ու տեխնիկական իրագործելիությունը և ծախսային առումով այդ միջոցների մատչելիությունը հնարավորինս արագ, սակայն ոչ ուշ, քան իր տարածքում սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց տասը տարվա ընթացքում.
 - a. Քանակական նպատակ վերահսկելու և, անհրաժեշտության պարագայում, կրճատելու համապատասխան աղբյուրներից գոյացող արտանետումները,
 - b. Արտանետումների սահմանաչափերը համապատասխան աղբյուրներից արտանետվող թափոնները վերահսկելու և, հնարավորության դեպքում, նաև կրճատելու համար,
 - c. Համապատասխան աղբյուրներից գոյացող արտանետումները վերահսկելու լավագույն մեթոդների և բնապահպանական գործելակարգերի օգտագործումը,
 - d. Բազմակի աղտոտիչները վերահսկելու ստրատեգիա, որը կունենա հարակից առավելություններ մերկուրիի արտանետումների վերահսկողության համար,
 - e. Այլընտրանքային միջոցներ՝ կրճատելու համապատասխան աղբյուրների արտանետումները:
6. Կողմերը կարող են կիրառել միևնույն միջոցները բոլոր համապատասխան աղբյուրների նկատմամբ կամ ձեռնարկել տարբեր միջոցներ աղբյուրների տարբեր դասերի նկատմամբ: Նպատակը պետք է լինեն Կողմի ձեռնարկած այն միջոցները, որոնք թույլ են տալիս հասնելու ողջամիտ առաջընթացի ժամանակի ընթացքում արտանետումները կրճատելու հարցում:
7. Կողմերից յուրաքանչյուրը հնարավորինս արագ, սակայն ոչ ուշ, քան իր տարածքում սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում կազմում է, իսկ հետո արդեն վարում

- համապատասխան աղբյուրներից գոյացող արտանետումների գույքագրում:
8. Կողմերի խորհրդածոդովը իր առաջին հանդիպման ժամանակ ընդունում է ուղենիշներ հետևյալի վերաբերյալ.
 - a. Առկա լավագույն մեթոդները և լավագույն բնապահպանական գործելակարգերը՝ հաշվի առնելով բոլոր տարբերությունները նոր և առկա աղբյուրների միջև և տարբեր միջոցների ազդեցությունները նվազեցնելու անհրաժեշտությունը, և
 - b. Աջակցություն Կողմերին 5-րդ պարբերությունում թվարկված միջոցների կիրառության հարցում, մասնավորապես՝ նպատակների և արտանետումների սահմանաչափերի որոշման հարցում.
 9. Կողմերի խորհրդածոդովը պետք է հնարավորության սահմաններում ընդունի ուղենիշներ հետևյալի վերաբերյալ.
 - a. Չափանիշներ, որոնք Կողմերը կարող են մշակել համաձայն 2(բ) պարբերությանը,
 - b. Արտանետումների գույքագրում անելու մեթոդաբան:
 10. Կողմերի խորհրդածոդովը պետք է պարբերաբար վերանայի և, պատշաճ կարգով արդիականացնի 8-րդ և 9-րդ պարբերությունների համաձայն ընդունված ուղենիշները: Կողմերը հաշվի են առնում ուղենիշները սույն հոդվածի դրույթները կիրարկելիս:
 11. Կողմերից յուրաքանչյուրը ներառում է տեղեկություններ իր կողմից սույն հոդվածի կիրարկման վերաբերյալ համաձայն 21-րդ հոդվածի, մասնավորապես՝ տեղեկություններ այն միջոցների մասին, որ ինքը ձեռնարկել է համաձայն 4-7 պարբերությունների, ինչպես նաև այդ միջոցների արդյունավետության մասին:

Հոդված 9 Արտազատումներ

1. Սույն հոդվածը վերաբերում է մերկուրիի և մերկուրիի միացությունների (որոնք հաճախ վկայակոչվում են որպես “ամբողջական մերկուրի”) սույն Կոնվենցիայի այլ դրույթներում չներառված համապատասխան սկզբնաղբյուրներից հողի ու ջրի մեջ արտազատումների վերահսկողությանը և, հնարավորության դեպքում նաև կրճատմանը:
2. Սույն Հոդվածի նպատակներից ելնելով.
 - a. “Արտազատումներ” նշանակում է մերկուրիի և մերկուրիի միացությունների արտազատումներ հողի ու ջրի մեջ,
 - b. “Համապատասխան աղբյուր” նշանակում է որևէ նշանակալի արտազատման անթրոպոգեն սկզբնաղբյուր մատնանշված Կողմի կողմից, որին չեն անդրադառնում սույն Կոնվենցիայի այլ դրույթները տվյալ Կողմի առնչությամբ,

- c. “Նոր աղբյուր” նշանակում է որևէ համապատասխան աղբյուր, որի կառուցումը կամ էական ձևափոխումը սկսվում է տվյալ Կողմի համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից հետո առնվազն մեկ տարի անց.
 - d. “Էական ձևափոխում” նշանակում է համապատասխան աղբյուրի ձևափոխումը, ինչի արդյունքում զգալիորեն մեծանում են թափոնները, ինչը բացառում է թափոնների փոփոխությունն օժանդակ արտադրանքի վերականգնման արդյունքում: Կողմը պետք է որոշի, թե արդյոք ձևափոխումն զգալի է, թե ոչ,
 - e. “Առկա աղբյուր” նշանակում է ցանկացած համապատասխան աղբյուր, որը նոր աղբյուր չէ,
 - f. “Արտազատումների սահմանային արժեք” նշանակում է մերկուրիի կամ մերկուրիի միացությունների խտության, զանգվածի կամ արտազատումների տոկոսների սահմանաչափ, ինչը հաճախ արտահայտվում է որպես “ամբողջական մերկուրի,” որն արտազատվում է սկզբնաղբյուրից:
3. Կողմերից յուրաքանչյուրը պետք է իր տարածքում սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան երեք տարվա ընթացքում, իսկ դրանից հետո կանոնավոր հիմունքներով, մատնանշի համապատասխան սկզբնաղբյուրների դասերը:
4. Համապատասխան աղբյուրներ ունեցող Կողմը ձեռնարկում է միջոցներ վերահսկելու արտազատումները և կարող է մշակել ազգային ծրագիր, որով կնախատեվեն միջոցառումներ արտազատումների վերահսկողության և ակնկալվող թիրախների, նպատակների և արդյունքների նախանշման համար: Որևէ ազգային ծրագիր ներկայացվում է Կողմերի խորհրդատուներին այդ Կողմի համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո չորս տարվա ընթացքում: Եթե կողմը մշակում է ծրագրի իրագործման պլան համաձայն 20-րդ հոդվածի, վերջինս կարող է դրանում ներառել սույն պարբերության համաձայն մշակված ծրագիրը:
5. Միջոցները ներառում են հետևյալ մեկ կամ մի քանի միջոցները՝ ըստ անհրաժեշտության.
- a. Արտազատումների սահմանաչափերը համապատասխան աղբյուրներից արտանետվող արտազատումները վերահսկելու և, հնարավորության դեպքում, նաև կրճատելու համար,
 - b. Համապատասխան աղբյուրներից գոյացող արտազատումները վերահսկելու լավագույն մեթոդների և բնապահպանական գործելակարգերի օգտագործումը,
 - c. Բազմակի աղտոտիչները վերահսկելու ստրատեգիա, որը կունենա հարակից առավելություններ մերկուրիի արտազատումների վերահսկողության համար,

- d. Այլընտրանքային միջոցներ՝ կրճատելու համապատասխան աղբյուրների արտազատումները:
6. Կողմերից յուրաքանչյուրը հնարավորինս արագ, սակայն ոչ ուշ, քան իր տարածքում սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում կազմում է, իսկ հետո արդեն վարում համապատասխան աղբյուրներից գոյացող արտազատումների գույքագրում:
 7. Կողմերի խորհրդաժողովը պետք է հնարավորության սահմաններում ընդունի ուղենիշներ հետևյալի վերաբերյալ.
 - a. Առկա լավագույն մեթոդները և լավագույն բնապահպանական գործելակարգերը՝ հաշվի առնելով բոլոր տարբերությունները նոր և առկա աղբյուրների միջև և տարբեր միջոցների ազդեցությունները նվազեցնելու անհրաժեշտությունը, և
 - b. Արտազատումների գույքագրում անելու մեթոդալուծիան:
 8. Կողմերից յուրաքանչյուրը ներառում է տեղեկատվություն իր կողմից սույն հոդվածի կիրարկման վերաբերյալ համաձայն 21-րդ հոդվածի, մասնավորապես՝ տեղեկատվություն այն միջոցների մասին, որ ինքը ձեռնարկել է համաձայն 3-6 պարբերությունների, ինչպես նաև այդ միջոցների արդյունավետության մասին:

Հոդված 10

Բացի մերկուրիի թափոններից այլ մերկուրիի՝ շրջակա միջավայրի համար անվտանգ միջանկյալ պահեստավորում

1. Սույն հոդվածը վերաբերում է 3-րդ հոդվածով սահմանված մերկուրիի և մերկուրիի միացությունների միջանկյալ պահեստավորմանը, ինչպես որ այն սահմանված է 3-րդ հոդվածում, որոնց վրա չի տարածվում 11-րդ հոդվածով սահմանված մերկուրիի թափոնների սահմանումը:
2. Կողմերից յուրաքանչյուրը ձեռնարկում է միջոցներ՝ ապահովելու որ սույն Կոնվենցիայի համաձայն Կողմի համար թույլատրելի օգտագործման ենթակա մերկուրիի և մերկուրիի միացությունների միջանկյալ պահեստավորումը իրականացվի շրջակա միջավայրի համար անվտանգ եղանակով՝ հաշվի առնելով 3-րդ պարբերության համաձայն սահմանված ուղենիշները և պահանջները:
3. Կողմերի խորհրդաժողովն ընդունում է ուղենիշներ մերկուրիի և մերկուրիի միացությունների՝ շրջակա միջավայրի համար անվտանգ միջանկյալ պահեստավորման վերաբերյալ՝ հաշվի առնելով “Վտանգավոր թափոնների անդրսահմանային շարժի և տնօրինման մասին” Բազելի կոնվենցիան և այլ վերաբերելի ուղենիշներ: Կողմերի խորհրդաժողովը կարող է ընդունել պահանջներ միջանկյալ պահեստավորման վերաբերյալ սույն Կոնվենցիային կից հավելվածով՝ համաձայն 27-րդ հոդվածի:

4. Կողմերը պատշաճ կարգով համագործակցում են մեկմեկու և համապատասխան միջկառավարական կազմակերպությունների և միավորների հետ՝ արդիականացնելու կարողությունների ձևավորումը մերկուրիի և մերկուրիի միացությունների՝ շրջակա միջավայրի համար անվտանգ պահեստավորման ոլորտում:

Հոդված 11 **Մերկուրիի թափոններ**

1. “Վտանգավոր թափոնների անդրսահմանային շարժի և տնօրինման մասին” Բազելի կոնվենցիայի համապատասխան սահմանումները Բազելի կոնվենցիայի Կողմերի համար վերաբերում են սույն Կոնվենցիայում ներառված թափոններին: Սույն Կոնվենցիայի Կողմերը, որոնք Բազելի կոնվենցիայի կողմեր չեն, օգտագործում են սույն սահմանումները որպես ուղենիշներ սույն Կոնվենցիայով սահմանված թափոնների առնչությամբ:
2. Սույն Կոնվենցիայի նպատակներից ելնելով՝ մերկուրիի թափոնները ներառում են այն նյութերը և առարկաները, որոնք.

- a. Բաղկացած են մերկուրիից կամ մերկուրիի միացություններից,
- b. Պարունակում են մերկուրի կամ մերկուրիի միացություններ կամ
- c. Վարակված են մերկուրիով կամ մերկուրիի միացություններով,

այն քանակով, որը գերազանցում է Կողմերի խորհրդաժողովի նախանշած շեմը, համագործակցելով Բազելի կոնվենցիայի համապատասխան մարմինների հետ ներդաշնակեցման եղանակով, որոնք տնօրինվում են կամ պետք է տնօրինվեն կամ պահանջվում է, որ տնօրինվեն ներպետական օրենսդրության կամ սույն Կոնվենցիայի դրույթներով: Այս սահմանումը չի ներառում հանքահանությունից գոյացող փոխաբեռնումները, ապարները և պոչամբարները, բացառությամբ մերկուրիի առաջնային հանքանահությանը, եթե դրանք չեն պարունակում մերկուրի կամ մերկուրիի միացություններ, որոնք կգերազանցեն Կողմերի խորհրդաժողովի սահմանած շեմը:

3. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է համապատասխան միջոցներ, որպեսզի մերկուրիի թափոնները.

- a. Կառավարվեն շրջակա միջավայրի համար անվտանգ եղանակով՝ հաշվի առնելով Բազելի կոնվենցիայով սահմանված ուղենիշները և պահպանելով այն պահանջները, որ Կողմերի խորհրդաժողովը 27-րդ հոդվածի համաձայն կրնդունի լրացուցիչ հավելվածով: Այդ պահանջները մշակելիս Կողմերի խորհրդաժողովը հաշվի է առնում Կողմերի՝ թափոնների կառավարման կարգավորումները և ծրագրերը,
- b. Միայն վերականգնվեն, վերամշակվեն, վերստացվեն և ուղղակիորեն վերօգտագործվեն այնպիսի կիրառության

համար, որը համաձայն սույն Կոնվենցիայի՝ թույլ է տրվել Կողմին կամ տնօրինվեն շրջակա միջավայրի համար անվտանգ եղանակով՝ համաձայն 3(a) պարբերությանը:

- c. Բազելի կոնվենցիայի Կողմերի համար, չփոխադրվեն միջազգային սահմաններով, բացառությամբ շրջակա միջավայրի համար վտանգ չներկայացնող տնօրինման՝ համաձայն սույն հոդվածի և այդ Կոնվենցիայի: Այն հանգամանքներում, երբ Բազելի կոնվենցիան չի վերաբերում միջազգային սահմաններով փոխադրումներին, Կողմը նման փոխադրում թույլ է տալիս միայն համապատասխան միջազգային կանոնները, չափորոշիչներն ու ուղենիշները հաշվի առնելուց հետո:
4. Կողմերի խորհրդաժողովը սերտորեն համագործակցում է Բազելի կոնվենցիայի համապատասխան մարմինների հետ 3(a) պարբերությունում վկայակոչված ուղենիշների վերանայման և լրամշակման գործում:
5. Կողմերը խրախուսվում են համագործակցել մեկմեկու և համապատասխան միջկառավարական կազմակերպությունների և այլ մարմինների հետ, ըստ անհրաժեշտության՝ ձևավորելու մերկուրիի թափոնների շրջակա միջավայրի համար անվտանգ կառավարման համաշխարհային, տարածաշրջանային և ազգային կարողություններ:

Հոդված 12

Վարակված տեղանքներ

1. Կողմերից յուրաքանչյուրը փորձում է մշակել համապատասխան ստրատեգիաներ մերկուրիով կամ մերկուրիի միացություններով վարակված տեղանքներ հայտնաբերելու և դրանք գնահատելու ուղղությամբ:
2. Նման տեղանքների հետ կապված ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկվող որևէ գործողություն պետք է իրականացվի շրջակա միջավայրի համար վտանգ չներկայացնող եղանակով՝ ներառելով, ըստ անհրաժեշտության, դրանց պարունակած մերկուրիի կամ մերկուրիի միացությունների կողմից մարդու առողջությանը և շրջակա միջավայրին սպառնացող ռիսկերի գնահատում:
3. Կողմերի խորհրդաժողովն ընդունում է ուղենիշներ վարակված տեղանքների կառավարման համար, որոնք կարող են ներառել մեթոդներ և մոտեցումներ.
 - a. Տեղանքի հայտնաբերման և բնորոշման,
 - b. Հանրության ներգրավման,
 - c. Մարդու առողջությանը և շրջակա միջավայրին սպառնացող ռիսկերի գնահատման,

- d. Վարակված տեղանքներից եկող ռիսկերի կառավարման տարբերակների,
 - e. Առավելությունների և ծախսերի գնահատման և
 - f. Արդյունքների վավերացման համար:
4. Կողմերին խրախուսվում է համագործակցել վարակված տեղանքների հայտնաբերման, գնահատման, ըստ առաջնահերթությունների դասակարգման և, հնարավորության դեպքում, վերականգնման ուղղությամբ ստրատեգիաների մշակման և գործողությունների իրականացման ոլորտում:

Հոդված 13

Ֆինանսական ռեսուրսներ և մեխանիզմներ

1. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է սույն Կոնվենցիայի կիրարկումն ապահովող նեպտեկան գործողությունների համար իր կարողությունների շրջանակներում տրամադրել ռեսուրսներ՝ համաձայն իր ազգային քաղաքականությունների, առաջնահերթությունների, պլանների և ծրագրերի: Այդ ռեսուրսները կարող են ներառել ներպետական ֆինանսական միջոցներ համապատասխան քաղաքականությունների, զարգացման ստրատեգիաների և պետական բյուջեների, երկկողմ և բազմակողմ ֆինանսավորման, ինչպես նաև մասնավոր հատվածի ներգրավման միջոցով:
2. Սույն Կոնվենցիայի կիրարկման ընդհանուր արդյունավետությունը զարգացող պետություններ հանդիսացող Կողմերի համար առնչվում է սույն հոդվածի արդյունավետ կիրարկմանը:
3. Ֆինանսական և տեխնիկական աջակցության, ինչպես նաև կարողությունների ձևավորման և տեխնոլոգիաների փոխանցման բազմակողմ, տարածաշրջանային և երկկողմ աղբյուրները խրախուսվում են հրատապ կարգով զարգացնելու և ծավալելու գործողություններ մերկուրիի ոլորտում՝ աջակցելու զարգացող պետություններ հանդիսացող Կողմերին սույն Կոնվենցիայի կիրարկման հարցում՝ կապված ֆինանսական ռեսուրսների, տեխնիկական աջակցության և տեխնոլոգիաների փոխանցման հետ:
4. Ֆինանսավորման հետ կապված իրենց գործողություններում Կողմերը լիարժեքորեն հաշվի են առնում փոքր կղզիներ հանդիսացող կամ նվազ զարգացած պետություն-Կողմերի հատուկ կարիքներն ու առանձնահատուկ հանգամանքները:
5. Սույնով սահմանվում է համապատասխան, կանխատեսելի և ժամանակին տրամադրվող ֆինանսական ռեսուրսների մեխանիզմ: Մեխանիզմը աջակցելու է զարգացող պետություն հանդիսացող Կողմերին կամ անցումային փուլում գտնվող պետություն- Կողմերին սույն Կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորությունների կատարման գործում:

6. Մեխանիզմը պետք է ներառի.
 - a. Գլոբալ էկոլոգիական ֆոնդը և
 - b. Հատուկ միջազգային ծրագիր հոգուտ կարողությունների ձևավորմանը և տեխնիկական աջակցությանը:
7. Գլոբալ էկոլոգիական ֆոնդը տրամադրում է նոր, կանխատեսելի, համապատասխան և ժամանակին ֆինանսական ռեսուրսներ՝ սույն Կոնվենցիայի կիրարկումը հոգալու ծախսերը՝ ըստ Կողմերի խորհրդածողովի պայմանավորվածության: Սույն Կոնվենցիայի նպատակներից ելնելով՝ Գլոբալ էկոլոգիական ֆոնդը գործում է Կողմերի խորհրդածողովի ուղղորդմամբ և հաշվետու է վերջինիս: Կողմերի խորհրդածողովն ուղենիշներ է տրամադրում ֆինանսական ռեսուրսների մատչելիության և օգտագործման ընդհանուր ստրատեգիաների, քաղաքականությունների, ծրագրային առաջնահերթությունների և ընտրության չափանիշների վերաբերյալ: Ի լրումն սրա՝ Կողմերի խորհրդածողովը տրամադրում է ուղենիշներ այն գործողությունների տեսակների մոտավոր ցանկի վերաբերյալ, որոնք կարող են օժանդակություն ստանալ Գլոբալ էկոլոգիական ֆոնդից: Գլոբալ էկոլոգիական ֆոնդը տրամադրում է ռեսուրսներ՝ հոգալու կարողությունների ձևավորման որոշ գործողությունների գլոբալ էկոլոգիայի համար առավելությունների աճողական և դրանց համաձայնեցված լիարժեք ծախսերը:
8. Որևէ գործողության համար ռեսուրս տրամադրելիս Գլոբալ էկոլոգիական հիմնադրամը պետք է հաշվի առնի առաջարկվող գործողության մերկուրիի հավանական կրճատումը՝ համեմատած դրա ծախսերի հետ:
9. Սույն Կոնվենցիայի նպատակներից ելնելով՝ 6(b) պարբերության մեջ վկայակոչված Ծրագիրը գործարկվելու է Կողմերի խորհրդածողովի ուղղորդման ներքո և հաշվետու է լինելու վերջինիս: Կողմերի խորհրդածողովն իր առաջին հանդիպմանը որոշելու է Ծրագիրը հյուրընկալող կառույցը, որը պետք է լինի գործող մարմին և ուղենիշներ տրամադրի վերջինիս, այդ թվում՝ դրա տևողության մասին: Բոլոր Կողմերը և մնացած շահագրգիռ կողմերը կամավորության հիմունքներով հրավիրվում են ֆինանսական ռեսուրսներ տրամադրելու Ծրագրին:
10. Կողմերի խորհրդածողովը և Մեխանիզմը կազմող մարմինները Կողմերի խորհրդածողովի առաջին հանդիպման ժամանակ համաձայնության են գալիս այն կարգավորումների շուրջ, որոնցով վերոհիշյալ պարբերությունները մտնում են ուժի մեջ:
11. Կողմերի խորհրդածողովը իր երրորդ հանդիպումից ոչ ուշ, իսկ դրանից հետո արդեն կանոնավոր հիմունքներով վերանայում է ֆինանսավորման մակարդակը, Կողմերի խորհրդածողովի տրամադրած ուղենիշներն այն մարմիններին, որոնց վստահված է սույն հոդվածով սահմանված Մեխանիզմի գործարկումը և դրանց արդյունավետությունը, ինչպես նաև նրանց կարողությունները

բավարարելու զարգացող պետություն հանդիսացող և անցումային տնտեսություններով Կողմերի փոփոխվող կարիքները: Այդօրինակ վերանայման հիման վրա կձեռնարկեն համապատասխան գործողություններ՝ բարելավելու Մեխանիզմի արդյունավետությունը:

12. Բոլոր Կողմերն, իրենց կարողությունների շրջանակներում, հրավիրվում են իրենց նպաստն ունենալու Մեխանիզմի կայացմանը: Մեխանիզմը խրախուսում է ռեսուրսների տրամադրումն այլ աղբյուրներից, այդ թվում՝ մասնավոր հատվածից և կփորձի ձեռք բերել ռեսուրսներ իր օժանդակությունը վայելող գործողությունների համար:

Հոդված 14

Կարողությունների ձևավորում, տեխնիկական աջակցություն և տեխնոլոգիաների փոխանցում

1. Կողմերը համագործակցում են իրենց համապատասխան կարողությունների շրջանակներում ժամանակին տրամադրելու կարողությունների ձևավորման և տեխնիկական աջակցության համապատասխան ռեսուրսներ զարգացող պետություն հանդիսացող Կողմերին, մասնավորապես՝ ամենաթերի զարգացած պետություններ հանդիսացող և անցումային տնտեսություններ ունեցող Կողմերին՝ օժանդակելու նրանց սույն Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման հարցում:
2. Կարողությունների ձևավորումը և տեխնիկական աջակցությունը, համաձայն 1-ին պարբերության և 13-րդ հոդվածի, կարող են տրամադրվել տարածաշրջանային, ենթատարածաշրջանային և ներպետական կառույցների միջոցով, այդ թվում՝ գործող տարածաշրջանային և ենթատարածաշրջանային կենտրոնների, այլ բազմակողմ և երկկողմ միջոցների և գործընկերությունների, ներառյալ՝ մասնավոր հատվածի գործընկերությունները: Համագործակցությունը և համակարգումը քիմիական նյութերի և թափոնների ոլորտում այլ բազմակողմ բնապահպանական համաձայնագրերի շուրջ անհրաժեշտ են՝ մեծացնելու տեխնիկական աջակցության և դրա տրամադրման արդյունավետությունը:
3. Զարգացած պետություն համարվող Կողմերը և այլ Կողմերն իրենց կարողություններով խթանում և հեշտացնում են մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի օժանդակությամբ շրջակա միջավայրի համար վտանգ չներկայացնող արդիական այլընտրանքային տեխնոլոգիաների զարգացումը, փոխանցումը և հաղորդումը զարգացող պետություն հանդիսացող Կողմերին, մասնավորապես՝ ամենաթերի զարգացած, փոքր կղզիներ, ինչպես նաև անցումային տնտեսություններ համարվող պետություններին՝ հզորացնելու սույն Կոնվենցիան արդյունավետորեն կիրարկելու նրանց կարողությունները:

4. Կողմերի խորհրդաժողովը մինչև իր երկրորդ հանդիպումն, իսկ դրանից հետո կանոնավոր հիմունքներով և հաշվի առնելով Կողմերի ներկայացրած փաստաթղթերը և զեկույցները, այդ թվում՝ 21-րդ հոդվածում ներառվածները և այլ շահագրգիռ կողմերի տրամադրած տեղեկատվությունը.
 - a. Քննության է առնում այլընտրանքային տեխնոլոգիաների առնչությամբ առկա նախաձեռնությունները և առաջընթացը,
 - b. Քննության է առնում Կողմերի, մասնավորապես՝ զարգացող պետություն հանդիսացող Կողմերի կարիքներն այլընտրանքային տեխնոլոգիաների ոլորտում և
 - c. Բացահայտում է Կողմերի, մասնավորապես՝ զարգացող պետություն հանդիսացող Կողմերի առջև ծառայած խնդիրները տեխնոլոգիաների փոխանցման ոլորտում:
5. Կողմերի խորհրդաժողովը առաջարկություններ է ներկայացնում այն մասին, թե ինչպես կարելի է սույն հոդվածի համաձայն էլ ավելի զարգացնել կարողությունների ձևավորումը, տեխնիկական աջակցությունը և տեխնոլոգիաների փոխանցումը:

Հոդված 15

Կիրարկման և համապատասխանության կոմիտեն

1. Սույնով ստեղծվում է մեխանիզմ, այդ թվում՝ Կոմիտե՝ որպես Կողմերի խորհրդաժողովի օժանդակ մարմին՝ խթանելու սույն Կոնվենցիայի բոլոր դրույթների կիրարկումը և վերանայելու համապատասխանությունը դրանց: Մեխանիզմը, այդ թվում՝ Կոմիտեն իր բնույթով ֆասիլիտացնող է և պետք է հատուկ ուշադրություն դարձնի Կողմերի մասնավոր ներպետական կարողություններին և հանգամանքներին:
2. Կոմիտեն խթանում է սույն Կոնվենցիայի դրույթների կիրարկումը և վերանայում ձեռնարկված գործողությունների համապատասխանությունը Կոնվենցիայի դրույթներին: Կոմիտեն քննության է առնում կիրարկման և համապատասխանության անհատական և համակարգային հարցերը և, ըստ անհրաժեշտության, անում առաջարկություններ Կողմերի խորհրդաժողովին:
3. Կոմիտեն կազմված է 15 անդամներից, որոնց նշանակում են Կողմերը և ընտրում Կողմերի խորհրդաժողովը՝ պատշաճորեն հաշվի առնելով աշխարհագրական ներկայացուցչությունը՝ հաշվի առնելով Միավորված ազգերի հինգ տարածաշրջանները: Առաջին անդամներն ընտրվում են Կողմերի խորհրդաժողովի առաջին հանդիպմանը, իսկ դրանից հետո՝ Կողմերի խորհրդաժողովի 5-րդ պարբերության համաձայն ընդունված կանոնակարգով սահմանված կարգով: Կոմիտեի անդամներն իրավասու են սույն Կոնվենցիային

- առնչվող ոլորտներում, իսկ Կոմիտեն արտացոլում է գիտելիքի և փորձառության պատշաճ հավասարակշռություն:
4. Կոմիտեն կարող է հարցեր քննարկել հետևյալի մասին.
 - a. Որևէ Կողմի գրավոր ներկայացումների հիման վրա իր ձեռնարկած գործողությունների համապատասխանության,
 - b. Ազգային զեկույցների՝ համաձայն 21-րդ հոդվածի և
 - c. Կողմերի խորհրդածոդովի խնդրանքով:
 5. Կոմիտեն մշակում է իր կանոնակարգը, որը պետք է հաստատվի Կողմերի խորհրդածոդովի երկրորդ հանդիպմամբ: Կողմերի խորհրդածոդովը կարող է լրացուցիչ պայմաններ ընդունել Կոմիտեի համար:
 6. Կոմիտեն ջանք չի խնայում ընդունելու իր հանձնարարականները կոնսենսուսով: Եթե սպառվել են կոնսենսուսի ուղղությամբ ձեռնարկված բոլոր ջանքերը և կոնսենսուս չկա, որպես վերջին ապավեն նման հանձնարարականներն ընդունվում են ներկա և քվեարկող անդամների ձայների երեք քառորդ մեծամասնությամբ և քվորումը պետք է լինի անդամների երկու երրորդը:

Հոդված 16

Առողջապահական ասպեկտներ

1. Կողմերը խրախուսվում են.
 - a. Խթանել այնպիսի ստրատեգիաների և ծրագրերի մշակումն ու իրականացումը, որոնցով որոշարկվում և պաշտպանվում է ռիսկային բնակչությունը, մասնավորապես՝ խոցելի բնակչությունը և որոնք կարող են ներառել գիտելիքահեն առողջապահական ուղենիշների ընդունում՝ ուղղված մերկուրիից և մերկուրիի միացություններից պաշտպանվելուն, նշանակելով թիրախներ մերկուրիից պաշտպանվելու համար, ինչպես նաև հանրային կրթության ոլորտում հանրային առողջապահության և այլ առնչվող ոլորտների ներգրավմամբ,
 - b. Խթանել մերկուրիից և մերկուրիի միացություններից աշխատանքային պաշտպանության գիտելիքահեն կրթական և կանխարգելիչ ծրագրերի մշակումն ու իրականացումը,
 - c. Խթանել համապատասխան առողջապահական ծառայություններ մերկուրիից և մերկուրիի միացություններից տուժած բնակչության համար կանխարգելման, բուժման և խնամքի ոլորտում,
 - d. Պատշաճ կարգով ստեղծել և հզորացնել ինստիտուցիոնալ և առողջապահական պրոֆեսիոնալ կարողությունները մերկուրիից և մերկուրիի միացություններից պաշտպանվելու առողջապահական ռիսկերի կանխարգելման, ախտորոշման, բուժման և մոնիթորինգի ոլորտում:

2. Առողջապահական հարցերը և գործողությունները քննարկելիս Կողմերի խորհրդածողովը պետք է.
 - a. Խորհրդակցի և համագործակցի Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Աշխատանքի միջազգային կազմակերպության, ինչպես նաև այլ համապատասխան միջկառավարական կազմակերպությունների հետ և
 - b. Խթանի համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Աշխատանքի միջազգային կազմակերպության և, ըստ անհրաժեշտության, այլ համապատասխան միջկառավարական կազմակերպությունների հետ:

Հոդված 17

Տեղեկատվության փոխանակում

1. Յուրաքանչյուր Կողմ հեշտացնում է փոխանակումը.
 - a. Մերկուրիի և մերկուրիի միացությունների վերաբերյալ գիտական, տեխնիկական, տնտեսական և իրավական տեղեկատվության, այդ թվում՝ թունաբանական, էկոթունաբանական և անվտանգության վերաբերյալ տեղեկատվությունը,
 - b. Մերկուրիի և մերկուրիի միացությունների արտադրության, կիրառության, առևտրի, արտազատումների և արտանետումների կրճատմանը և վերացմանը վերաբերող տեղեկատվությունը,
 - c. Տեխնիկական և տնտեսական տեսանկյունից կենսունակ այլընտրանքների վերաբերյալ տեղեկատվությունը.
 - i. Մերկուրիի հավելիչներով արտադրանք,
 - ii. Արտադրական գործընթացներ, որոնցում օգտագործվում են մերկուրի կամ մերկուրիի միացություններ և
 - iii. Գործողություններ կամ գործընթացներ, որոնց արդյունքում արտազատվում կամ արտանետվում են մերկուրի կամ մերկուրիի միացություններ և
 - d. Համաճարակաբանական տեղեկատվություն մերկուրիից և մերկուրիի միացություններից պաշտպանվածությանն առնչվող առողջապահական ռիսկերի վերաբերյալ՝ ըստ անհրաժեշտության սերտորեն համագործակցելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության և այլ համապատասխան կազմակերպությունների հետ:
2. Կողմերը կարող են 1-ին պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը փոխանակել անմիջականորեն կամ այլ

համապատասխան կազմակերպությունների միջոցով, այդ թվում՝ ըստ անհրաժեշտության, քիմիական տարրերի և թափոնների կոնվենցիաների քարտուղարությունների:

3. Քարտուղարությունը միջնորդում է համագործակցությունը սույն հոդվածով նախատեսված տեղեկատվության փոխանակման ոլորտում, ինչպես նաև համապատասխան կազմակերպությունների հետ, այդ թվում՝ բազմակողմ բնապահպանական համաձայնագրերի քարտուղարությունների և այլ միջազգային նախաձեռնությունների: Ի լրումն Կողմերից ստացված տեղեկատվության՝ այն ներառում է տեղեկատվություն այնպիսի միջկառավարական և հասարակական կազմակերպություններից, որոնք ունեն գիտելիք և փորձ մերկուրիի ոլորտում, ինչպես նաև ոլորտի ներպետական և միջազգային մարմիններից:
4. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է պատասխանատու սույն Կոնվենցիայով նախատեսված տեղեկատվության փոխանակման, այդ թվում՝ 3-րդ հոդվածի համաձայն ներկրող Կողմերի համաձայնության առնչությամբ:
5. Սույն Կոնվենցիայի նպատակներից ելնելով՝ մարդու և շրջակա միջավայրի առողջության ու անվտանգության մասին տեղեկատվությունը չի կարող համարվել գաղտնի: Կողմերը, որոնք սույն Կոնվենցիայի համաձայն, փոխանակում են այլ տեղեկատվություն, պաշտպանում են փոխադարձ համաձայնությամբ նախատեսված այլ գաղտնի տեղեկատվությունը:

Հոդված 18

Հանրային տեղեկատվություն, իրազեկություն և կրթություն

1. Յուրաքանչյուր Կողմ, իր կարողությունների շրջանակներում, խթանում և հեշտացնում է.
 - a. Հասանելի տեղեկատվության տարածումը հանրության շրջանում հետևյալի վերաբերյալ.
 - i. Մերկուրիի և մերկուրիի միացությունների՝ առողջության և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության,
 - ii. Մերկուրիի և մերկուրիի միացությունների այլընտրանքների,
 - iii. 17-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված թեմաների,
 - iv. 19-րդ հոդվածի համաձայն իր գիտահետազոտական, զարգացման և մոնիթորինգային գործունեության արդյունքների,
 - v. սույն Կոնվենցիայով նախատեսված իր պարտավորությունների կատարման,

- b. Մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա մերկուրիի և մերկուրիի միացությունների անդրադարձների վերաբերյալ կրթության, վերապատրաստման և հանրային իրազեկման համապատասխան միջկառավարական և հասարակական կազմակերպությունների և խոցելի բնակչության հետ, ըստ անհրաժեշտության, համագործակցության միջոցով:
2. Յուրաքանչյուր Կողմ օգտագործում է գործող մեխանիզմները կամ քննության առումը այնպիսի մեխանիզմների մշակումը, ինչպիսիք են աղտոտիչների արտանետման և փոխանցման ռեգիստրները, ըստ անհրաժեշտության, մարդկային գործունեության արդյունքում արտանետվող, արտազատվող կամ տնօրինվող մերկուրիի և մերկուրիի միացությունների տարեկան քանակությունների հաշվարկների վերաբերյալ տեղեկատվության հավաքման և տարածման համար:

Հոդված 19

Գիտահետազոտական, զարգացման և մոնիթորինգային գործունեություն

1. Կողմերը ջանում են համագործակցել՝ մշակելու և կատարելագործելու, հաշվի առնելով իրենց համապատասխան հանգամանքներն ու կարողությունները.
 - a. Մերկուրիի և մերկուրիի միացությունների օգտագործման, սպառման և ջրի ու հողի մեջ անթրոպոգեն արտանետումների գույքագրումներ,
 - b. Մերկուրիի և մերկուրիի միացությունների մոդելավորման և աշխարհագրական ներկայացուցչական մոնիթորինգի ծրագրեր խոցելի բնակչության և բնապահպանական միջոցների շրջանում, ինչպիսիք են կենսաբանական միջոցները՝ ձկները, ծովային կաթնասունները, ծովային կրիաները և թռչունները, ինչպես նաև համագործակցություն համապատասխան նմուշների հավաքման և փոխանակման ոլորտում,
 - c. Մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա մերկուրիի և մերկուրիի միացությունների ազդեցության գնահատումներ ի լրումն սոցիալական, տնտեսական և մշակութային անդրադարձների, հատկապես՝ խոցելի բնակչության առնչությամբ,
 - d. Ներդաշնակեցված մեթոդաբաններ (a), (b) և (c) ենթապարբերություններով նախատեսված գործողությունների համար,
 - e. Տեղեկատվություն մերկուրիի և մերկուրիի միացությունների բնապահպանական պարբերաշրջանի, տրանսպորտի (այդ թվում՝ մեծածավալ փոխադրումներն ու դեպոնացումը), ձևափոխումը և ճակատագիրը տարբեր էկոհամակարգերում՝

պատշաճորեն հաշվի առնելով մերկուրիի անթրոպոգեն և բնական արտանետումների և արտազատումների և պատմական դեպոնացումների վերամոբիլիզացիայի տարբերությունը,

- f. Մերկուրիի և մերկուրիի միացությունների, ինչպես նաև մերկուրիի հավելիչներով արտադրանքի կոմերցիայի և առևտրի մասին տեղեկատվություն,
 - g. Տեղեկատվություն և գիտական հետազոտություններ մերկուրի չպարունակող արտադրանքի և գործընթացների տեխնիկական և տնտեսական հասանելիության, ինչպես նաև մերկուրիի և մերկուրիի միացությունների արտանետումների և արտազատումների կրճատման և մոնիթորինգի առկա լավագույն մեթոդների և բնապահպանական գործելակարգերի վերաբերյալ:
2. Կողմերը պետք է, ըստ անհրաժեշտության, զարգացնեն գործող մոնիթորինգային ցանցերը և գիտահետազոտական ծրագրերը 1-ին պարբերությամբ նախատեսված գործողությունները ձեռնարկելիս:

Հոդված 20

Իրականացման ծրագրեր

1. Կողմերից յուրաքանչյուրը, հաշվի առնելով իր ներպետական հանգամանքները, նախնական գնահատումից հետո մշակում և իրագործում է իրականացման ծրագիր սույն Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունների կատարման համար: Ցանկացած այդօրինակ ծրագիր պետք է մշակվելուն պես ներկայացվի Քարտուղարությանը:
2. Կողմերից յուրաքանչյուրը կարող է վերանայել և արդիականացնել իր իրականացման ծրագիրը՝ հաշվի առնելով իր ներպետական հանգամանքները և ստանալով ուղղություն Կողմերի խորհրդածողովի կողմից և այլ կառույցներից:
3. Կողմերը պետք է 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված աշխատանքներն իրականացնելիս խորհրդակցեն ազգային շահագրգիռ կողմերի հետ՝ հեշտացնելու իրենց իրականացման ծրագրերի մշակումը, իրականացումը, վերանայումն ու արդիականացումը:
4. Կողմերը կարող են նաև համակարգել սույն Կոնվենցիայի իրականացումը հեշտացնող տարածաշրջանային ծրագրերը:

Հոդված 21

Զեկույցները

1. Կողմերից յուրաքանչյուրը Քարտուղարության միջոցով զեկույցում է Կողմերի խորհրդածողովին սույն Կոնվենցիայի դրույթների

- կատարման համար իր կողմից ձեռնարկված միջոցների, այդ միջոցների արդյունավետության, ինչպես նաև սույն Կոնվենցիայի նպատակներին հասնելիս իր առջև ծառայած խնդիրների մասին:
2. Կողմերից յուրաքանչյուրն իր զեկույցներում ներառում է սույն Կոնվենցիայի 3-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներով պահանջվող տեղեկատվությունը:
 3. Կողմերի խորհրդաժողովն իր առաջին հանդիպմանը որոշում է զեկույցների այն ժամանակացույցը և ձևաչափը, որը պետք է պահպանեն Կողմերը՝ հաշվի առնելով քիմիական տարրերի և թափոնների մասին այլ կոնվենցիաների հետ զեկույցների համակարգման ցանկալիությունը:

Հոդված 22

Արդյունավետության գնահատումը

1. Կողմերի խորհրդաժողովը գնահատում է սույն Կոնվենցիայի արդյունավետությունը՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան վեց տարի անց, իսկ դրանից հետո պարբերաբար՝ Կողմերի խորհրդաժողովի որոշած պարբերականությամբ:
2. Գնահատումը հեշտացնելու նպատակով Կողմերի խորհրդաժողովը պետք է իր առաջին հանդիպմանը ձեռնարկի գործողություններ՝ իրեն ապահովելու շրջակա միջավայրում մերկուրիի և մերկուրիի միացությունների առկայության և շարժի, ինչպես նաև կենսաբանական միջոցներում և խոցելի բնակչության շրջանում մերկուրիի և մերկուրիի միացությունների դիտարկված մակարդակների վերաբերյալ համադրելի մոնիթորինգային տվյալներով:
3. Գնահատումը անց է կացվում առկա գիտական, բնապահպանական, տեխնիկական, ֆինանսական և տնտեսական տեղեկությունների հիման վրա, այդ թվում՝
 - a. Զեկույցների և այլ մոնիթորինգային տեղեկատվության՝ տրամադրված Կողմերի խորհրդաժողովին 2-րդ պարբերության համաձայն,
 - b. 21-րդ հոդվածի համաձայն ներկայացված զեկույցների,
 - c. 15-րդ հոդվածի համաձայն ներկայացված տեղեկատվության ու հանձնարարականների,
 - d. սույն Կոնվենցիայի համաձայն իրականացվող ֆինանսական աջակցության, տեխնոլոգիաների փոխանցման և կարողությունների ձևավորման միջոցառումների մասին զեկույցների և այլ վերաբերելի տեղեկատվության:

Հոդված 23

Կողմերի խորհրդաժողովը

1. Սույնով կազմավորվում է Կողմերի խորհրդաժողով:
2. Կողմերի խորհրդաժողովի առաջին հանդիպումը հրավիրում է Միավորված ազգերի բնապահպանական ծրագրի գործադիր տնօրենը ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Դրանից հետո Կողմերի խորհրդաժողովի կանոնավոր հանդիպումները տեղի են ունենում Խորհրդաժողովի որոշած կանոնավոր պարբերականությամբ:
3. Կողմերի խորհրդաժողովի արտահերթ հանդիպումները տեղի են ունենում այն ժամանակ, երբ դա անհրաժեշտ է համարում Խորհրդաժողովը կամ որևէ Կողմի գրավոր խնդրանքով՝ պայմանով, որ այն բանից հետո, երբ Քարտուղարությունը Կողմերին է հաղորդում խնդրանքը վեց ամսվա ընթացքում դա ստանում է Կողմերի առնվազն մեկ երրորդի աջակցությունը:
4. Կողմերի խորհրդաժողովը կոնսենսուսով համաձայնության է գալիս և ընդունում կանոնակարգ և ֆինանսական կանոններ իր և իրեն օժանդակող որևէ մարմնի համար, ինչպես նաև Քարտուղարության գործունեության կառավարման ֆինանսական դրույթները:
5. Կողմերի խորհրդաժողովը շարունակաբար վերանայում և գնահատում է սույն Կոնվենցիայի կիրարկումը: Այն իրագործում է սույն Կոնվենցիայով իրեն վերապահված գործառույթները և այդ նպատակով.
 - a. Կազմավորում այնպիսի օժանդակ մարմիններ, որոնք անհրաժեշտ է համարում Կոնվենցիայի կատարման համար,
 - b. Համագործակցում, ըստ անհրաժեշտության, իրավասու միջազգային կազմակերպությունների և միջկառավարական և հասարակական մարմինների հետ,
 - c. Պարբերաբար վերանայում իրեն և Քարտուղարությանը 21-րդ հոդվածի համաձայն տրամադրած ողջ տեղեկատվությունը,
 - d. Քննության առնում Իրականացման և համապատասխանության կոմիտեի կողմից իրեն ներկայացված առաջարկությունները,
 - e. Քննության է առնում և ձեռնարկում այլ լրացուցիչ գործողություններ, որոնց իրականացումն անհրաժեշտ է սույն Կոնվենցիայի նպատակներին հասնելու համար,
 - f. Վերանայում Ա և Բ հավելվածները՝ 4-րդ և 5-րդ հոդվածներով պահանջված կարգով:
6. Միավորված ազգերի կազմակերպությունը, վերջինիս մասնագիտացված գործակալությունները և Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը, ինչպես նաև սույն Կոնվենցիայի Կողմ չհանդիսացող որևէ պետություն կարող են Կողմերի խորհրդաժողովի հանդիպումներին մասնակցել դիտորդի կարգավիճակով: Որևէ մարմին կամ գործակալություն՝ ազգային կամ միջազգային, կառավարական կամ հասարակական, որը

որակավորված է սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող հարցերի ոլորտում, և տեղեկացրել է Քարտուղարությանը Կողմերի խորհրդաժողովին դիտորդի կարգավիճակով ներկայացված լինելու իր ցանկության մասին, կարող է ընդունվել, եթե Կողմերի մեկ երրորդը առարկություն չի ներկայացնում: Դիտորդների ընդունումն ու մասնակցությունը ենթակա է Կողմերի խորհրդաժողովի ընդունած կանոնակարգի կարգավորմանը:

Հոդված 24 **Քարտուղարությունը**

1. Սույնով կազմավորվում է Քարտուղարություն:
2. Քարտուղարության գործառույթներն են.
 - a. Ձեռնարկել միջոցներ Կողմերի խորհրդաժողովի և վերջինիս օժանդակ մարմինների հանդիպումների համար և ըստ անհրաժեշտության ծառայություններ մատուցել նրանց,
 - b. Հեշտացնել աջակցությունը Կողմերին, հատկապես՝ զարգացող պետություն հանդիսացող և անցումային տնտեսություններ ունեցող Կողմերին՝ ըստ վերջիններիս խնդրանքի, Կոնվենցիայի կիրարկման հարցում,
 - c. Համակարգել, ըստ անհրաժեշտության, համապատասխան միջազգային մարմինների, մասնավորապես՝ քիմիական տարրերի և թափոնների կոնվենցիաների քարտուղարությունների հետ,
 - d. Աջակցել Կողմերին սույն Կոնվենցիայի կիրարկմանը վերաբերող տեղեկատվության փոխանակման հարցում,
 - e. Նախապատրաստել և Կողմերին տրամադրել պարբերական զեկույցներ 15-րդ և 21-րդ հոդվածների համաձայն ստացված, ինչպես նաև այլ հասանելի տեղեկատվության հիման վրա,
 - f. Կողմերի խորհրդաժողովի ուղղորդմամբ ձեռնարկել այնպիսի վարչական և պայմանագրային գործողություններ, որոնք պահանջվում են իր գործառույթների արդյունավետ իրականացման համար և
 - g. Իրականացնել քարտուղարության այլ գործառույթներ՝ նախատեսված Կոնվենցիայով, ինչպես նաև այդօրինակ այլ գործառույթներ, որոնք կարող են սահմանվել Կողմերի խորհրդաժողովի կողմից:
3. Սույն Կոնվենցիայով քարտուղարության գործառույթներն իրականացվում են Միավորված ազգերի բնապահպանական ծրագրի գործադիր տնօրենի կողմից, եթե Կողմերի խորհրդաժողովը ներկա և քվեարկող Կողմերի ձայների երեք քառորդ մեծամասնությամբ չի որոշում քարտուղարության գործառույթները վստահել մեկ կամ ավելի միջազգային կազմակերպությունների:

4. Կողմերի խորհրդաժողովը, համապատասխան միջազգային մարմինների հետ խորհրդակցելով, կարող է ապահովել ավելի սերտ համագործակցություն և համակարգում Քարտուղարության և քիմիական տարրերի և թափոնների վերաբերյալ այլ կոնվենցիաների քարտուղարությունների միջև: Կողմերի խորհրդաժողովը, համապատասխան միջազգային մարմինների հետ խորհրդակցելուց հետո կարող է լրացուցիչ ուղենիշներ ներկայացնել այս հարցում:

Հոդված 25

Վեճերի կարգավորումը

1. Կողմերը փորձում են կարգավորել սույն Կոնվենցիայի մեկնաբանության կամ կիրառության վերաբերյալ իրենց միջև ծագող բոլոր վեճերը բանակցություններով և իրենց ընտրությամբ այլ խաղաղ միջոցներով:
2. Սույն Կոնվենցիան վավերացնելիս, ընդունելիս, հաստատելիս կամ Կոնվենցիային միանալիս կամ որևէ ժամանակ դրանից հետո Կողմը, որը տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն չէ, կարող է Ավանդապահին հանձնած գրավոր փաստաթղթով հայտարարել, որ սույն Կոնվենցիայի մեկնաբանությունը և կիրառությանն առնչվող որևէ վեճում ինքը ճանաչում է վեճերի կարգավորման հետևյալ մեկ կամ երկու միջոցները որևէ Կողմի առնչությամբ, որն ընդունում է միևնույն պարտավորությունը.
 - a. Արբիտրաժային դատարան՝ համաձայն Հավելված Ե-ի I մասով սահմանված ընթացակարգի,
 - b. Վեճերի հանձնում Արդարադատության միջազգային դատարան:
3. Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն հանդիսացող Կողմը կարող է նույնաբնույթ հայտարարություն անել արբիտրաժի վերաբերյալ՝ համաձայն 2-րդ պարբերության:
4. 2-րդ կամ 3-րդ պարբերությունների համաձայն արված հայտարարությունը մնում է ուժի մեջ մինչև դրա ժամկետի լրանալը՝ ըստ դրա համար նախատեսված պայմանների կամ երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ այն չեղյալ անելու մասին գրավոր ծանուցումը չի դեպոնացվում Ավանդապահի մոտ:
5. Հայտարարության ժամկետի լրանալը, այն չեղյալ անելու մասին ծանուցումը կամ նոր հայտարարությունը որևէ կերպ չեն ազդում արբիտրաժային դատարանի կամ Արդարադատության միջազգային դատարանի դատին հանձնված գործընթացների վրա, եթե վեճի կողմերն այլ բանի շուրջ համաձայնության չեն գալիս:
6. Եթե վեճի կողմերը չեն ընդունել վեճերի կարգավորման միևնույն միջոցը՝ համաձայն 2-րդ կամ 3-րդ պարբերության կամ եթե չեն կարողացել կարգավորել իրենց վեճը 1-ին պարբերությամբ

նախատեսված եղանակով տասներկու ամսվա ընթացքում այն բանից հետո, ինչ Կողմերից մեկը ծանուցել է մյուս Կողմին իրենց միջև առկա վեճի մասին, վեճը հանձնվում է հաշտեցման կոմիտեին վեճի որևէ Կողմի խնդրանքով: Հավելված Ե-ի II մասի ընթացակարգը վերաբերում է սույն հոդվածով նախատեսված հաշտեցմանը:

Հոդված 26

Կոնվենցիայի փոփոխությունները

1. Սույն Կոնվենցիայում փոփոխություններ կարող են առաջարկել Կողմերից յուրաքանչյուրը:
2. Սույն Կոնվենցիայում փոփոխություններն ընդունվում են Կողմերի խորհրդածողովի հանդիպմանը: Առաջարկվող որևէ փոփոխության տեքստը հաղորդվում է Կողմերին Քարտուղարության կողմից այն հանդիպումից առնվազն վեց ամիս առաջ, որի ընթացքում դրա ընդունումն առաջարկվում է: Քարտուղարությունն առաջարկվող փոփոխությունը նաև հաղորդում է Կոնվենցիան ստորագրած Կողմերին և դեպոնացնում Ավանդապահին ի գիտություն:
3. Կողմերը ձեռնարկում են բոլոր ջանքերը սույն Կոնվենցիային առաջարկվող որևէ փոփոխության շուրջ համաձայնության գալու կոնսենսուսով: Եթե սպասված են կոնսենսուսի հասնելու բոլոր ջանքերը և համաձայնություն ձեռք չի բերվել, փոփոխությունը որպես վերջին միջոց ընդունվում է հանդիպմանը ներկա և քվեարկող Կողմերի ձայների երեք քառորդ մեծամասնությամբ:
4. Ընդունված փոփոխությունը Ավանդապահի կողմից հաղորդվում է բոլոր Կողմերին վավերացման, ընդունման կամ հաստատման համար:
5. Փոփոխության վավերացումը, ընդունումը կամ հաստատումը գրավոր ծանուցվում է Ավանդապահին: 3-րդ պարբերության համաձայն ընդունված փոփոխությունը դրա պարտադիր ուժին համաձայնած Կողմերի համար ուժի մեջ է մտնում իննսուներորդ օրն այն բանից հետո, ինչ վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթերը կդեպոնացվեն այն Կողմերի առնվազն երեք քառորդի կողմից, որոնք Կողմ են հանդիսացել փոփոխության ընդունման ժամանակ: Դրանից հետո փոփոխությունն ուժի մեջ է մտնում որևէ այլ Կողմի համար իննսուներորդ օրն այն պահից, երբ Կողմը դեպոնացնում է փոփոխության իր վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթուղթը:

Հոդված 27

Հավելվածների ընդունումն ու փոփոխումը

1. Սույն Կոնվենցիայի հավելվածները հանդիսանում են դրա բաղկացուցիչ մասը և եթե բացահայտորեն այլ բան չի

- նախատեսվում, հղումը սույն Կոնվենցիային նշանակում է հղում նաև Կոնվենցիայի հավելվածներին:
2. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո ընդունված լրացուցիչ հավելվածները սահմանափակվում են ընթացակարգային, գիտական, տեխնիկական կամ վարչական հարցերով:
 3. Սույն Կոնվենցիայի լրացուցիչ հավելվածների առաջարկման, ընդունման և ուժի մեջ մտնելու համար գործում է հետևյալ ընթացակարգը:
 - a. Լրացուցիչ հավելվածներն առաջարկվում և ընդունվում են 26-րդ հոդվածի 1-3-րդ պարբերություններով նախատեսված ընթացակարգով,
 - b. Որևէ Կողմ, որ անկարող է ընդունել լրացուցիչ հավելվածը այդ մասին ծանուցում է Ավանդապահին մեկ տարվա ընթացքում այն բանից հետո, ինչ Ավանդապահը նրան հաղորդել է այդ հավելվածի ընդունման մասին: Ավանդապահն անհապաղ ծանուցում է Կողմերին ցանկացած այդպիսի ծանուցման մասին: Կողմը կարող է ցանկացած ժամանակ գրավոր ծանուցել Ավանդապահին, որ չեղյալ է անում լրացուցիչ հավելվածը չընդունելու մասին նախկին ծանուցումը, և այդ հավելվածը Կողմի համար ուժի մեջ է մտնում համաձայն ենթապարբերություն (c)-ի և
 - c. Լրացուցիչ հավելվածի ընդունման մասին Ավանդապահի ծանուցման մեկ տարին լրանալուն պես հավելվածն ուժի մեջ է մտնում բոլոր այն Կողմերի համար, որոնք ծանուցում չեն ներկայացրել այն չընդունելու մասին՝ համաձայն ենթապարբերություն բ-ով սահմանված դրույթների:
 4. Սույն Կոնվենցիայի հավելվածներում փոփոխությունների առաջարկումը, ընդունումը և ուժի մեջ մտնելը կատարվում է միևնույն ընթացակարգով, ինչ սույն Կոնվենցիայի լրացուցիչ հավելվածների առաջարկումը, ընդունումը և ուժի մեջ մտնելը, բացառությամբ այն դեպքի, երբ հավելվածում փոփոխությունն ուժի մեջ չի մտնում այն Կողմի համար, որը հայտարարություն է արել հավելվածներում փոփոխություններ անելու առնչությամբ՝ համաձայն 30-րդ հոդվածի 5-րդ պարբերության, ինչի պարագայում այդ փոփոխությունն ուժի մեջ է մտնում այդ Կողմի համար իննսուներորդ օրն այն պահից հետո, ինչ վերջինս սույն փոփոխության վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին իր փաստաթուղթը դեպոնացրել է Ավանդապահի մոտ:
 5. Եթե լրացուցիչ հավելվածը կամ լրացուցիչ հավելվածում փոփոխությունն առնչվում է սույն Կոնվենցիայի փոփոխությանը, լրացուցիչ հավելվածը կամ փոփոխությունն ուժի մեջ չի մտնում այնքան ժամանակ, քանի դեռ ուժի մեջ չի մտել Կոնվենցիայի փոփոխությունը:

Հոդված 28 **Չայնի իրավունքը**

1. Սույն Կոնվենցիայի Կողմերից յուրաքանչյուրն ունի մեկ ձայն, բացառությամբ 2-րդ պարբերությամբ նախատեսված դեպքի:
2. Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունն իր իրավասությանը վերաբերող հարցերում իրականացնում է իր ձայնի իրավունքը ձայների այն թվով, որը հավասար է սույն Կոնվենցիայի անդամ հանդիսացող իր անդամ պետությունների թվին: Այդ կազմակերպությունը չի իրականացնում ձայնի իր իրավունքը, եթե իր անդամ հանդիսացող պետություններից որևէ մեկն իրականացնում է ձայնի իր իրավունքը և հակառակը:

Հոդված 29 **Ստորագրումը**

Սույն Կոնվենցիան բաց է ստորագրության համար Ճապոնիայի Կիմամոտո քաղաքում 2013թ. հոկտեմբերի 10-ին և 11-ին բոլոր պետությունների և տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների համար, իսկ այնուհետև՝ Միավորված ազգերի Նյու Յորքի կենտրոնական գրասենյակում մինչև 2014թ. հոկտեմբերի 9-ը:

Հոդված 30 **Վավերացումը, ընդունումը, հաստատումը կամ միացումը**

1. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման պետությունների կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների կողմից: Այն բաց է միացման համար պետությունների և տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների կողմից ստորագրման համար Կոնվենցիայի փակվելու օրվա հաջորդ օրը: Վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման փաստաթղթերը դեպոնացվում են Ավանդապահի մոտ:
2. Տնտեսական ինտեգրման ցանկացած տարածաշրջանային կազմակերպություն, որը դառնում է սույն Կոնվենցիայի Կողմ այն պարագայում, երբ իր անդամ պետություններից և ոչ մեկը Կողմ չէ, ստանձնում է սույն Կոնվենցիայով պարտադիր ուժ ունեցող պարտավորությունները: Այն կազմակերպությունների պարագայում, որոնց անդամ պետություններից մեկը կամ մի քանիսը սույն Կոնվենցիայի Կողմ են, կազմակերպությունն ու իր անդամ հանդիսացող պետությունները որոշում են իրենց համապատասխան պարտականությունները սույն Կոնվենցիայով ստանձնած իրենց համապատասխան պարտավորությունների կատարման հարցում:

Այդ դեպքում կազմակերպությունն ու իր անդամ պետությունները իրավասու չեն միաժամանակ իրականացնել սույն Կոնվենցիայով նախատեսված իրավունքները:

3. Վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման իր փաստաթղթում տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունը հայտարարում է իր իրավասության աստիճանը սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող հարցերի առնչությամբ: Այդօրինակ կազմակերպությունները նաև տեղեկացնում են Ավանդապահին, որն իր հերթին ծանուցում է Կողմերին իր իրավասության աստիճանի որևէ փոփոխության մասին:
4. Յուրաքանչյուր պետություն կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն խրախուսվում է սույն Կոնվենցիայի վավերացման, ընդունման, հաստատման կամ Կոնվենցիային միանալու պահին Քարտուղարությանը փոխանցել տեղեկատվություն սույն Կոնվենցիայի կիրարկման ոլորտում իր կողմից ձեռնարկվելիք միջոցառումների մասին:
5. Իր վավերացման, ընդունման, հաստատման և միացման փաստաթղթում Կողմը կարող է հայտարարել, որ իր համար հավելվածում կատարվող փոփոխությունն ուժի մեջ է մտնում դրավերաբերյալ իր վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման փաստաթուղթը դեպոնացնելու պահից:

Հոդված 31

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման հիսուներորդ փաստաթղթի դեպոնացման իննսուներորդ օրը:
2. Յուրաքանչյուր պետության կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության համար, որը կվավերացնի, կընդունի կամ կհաստատի սույն Կոնվենցիան կամ կմիանա Կոնվենցիային վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման հիսուներորդ փաստաթղթի դեպոնացումից հետո Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն պետության կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման փաստաթղթի դեպոնացման իննսուներորդ օրը:

Հոդված 32

Վերապահումներ

Սույն Կոնվենցիայից վերապահումներ չեն թույլատրվում:

Հոդված 33 Հրաժարում

1. Սույն Կոնվենցիան Կողմի համար ուժի մեջ մտնելուց երեք տարի հետո ցանկացած ժամանակ Կողմը կարող է հրաժարվել Կոնվենցիայից՝ Ավանդապահին գրավոր ծանուցում ներկայացնելու միջոցով:
2. Ցանկացած այդպիսի հրաժարում ուժի մեջ է մտնում հրաժարման մասին ծանուցումը Ավանդապահի կողմից ստարանու օրվանից հետո մեկ տարին լրանալուն պես կամ ավելի ուշ ժամկետում, որը կվատնանշվի հրաժարման մասի նժանուցման մեջ:

Հոդված 34 Ավանդապահը

Սույն Կոնվենցիայի Ավանդապահը Միավորված ազգերի Գլխավոր քարտուղարն է:

Հոդված 35 Իրական տեքստերը

Սույն Կոնվենցիայի բնագիրը, որի արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն տեքստերը հավասարապես իրական են դեպոնացվում են Ավանդապահի մոտ:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ ներքոստորագրյալները, լինելով պատշաճորեն լիազորված, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Արված է Ճապոնիայի Կիմամոտո քաղաքում հոկտեմբեր ամսի տասներորդ օրը, երկու հազար տասներեքերորդ տարեթվի:

Հավելված Ա

Մերկուրիի հավելիչներով արտադրանք

Սույն Հավելվածում ներառված չի հետևյալ արտադրանքը.

- a. Քաղաքացիական պաշտպանության և ռազմական օգտագործման համար անհրաժեշտ արտադրանք,
- b. Հետազոտությունների, գործիքակազմի կալիբրացիայի համար, որպես չափորոշիչ օգտագործվող արտադրանքը,
- c. Այնտեղ, որտեղ առկա չեն փոխարինման ենթակա մերկուրի չպարունակող պիտանի այլընտրանքներ, անջատիչներ և ռելեններ, սառը կաթոդային ցերեկային լույսի լամպեր և արտաքին էլեկտրոդով ցերեկային լույսի լամպեր (CCFL և EEFL) էլեկտրոնային էկրանների և չափիչ սարքավորումների համար,
- d. Ավանդական կամ կրոնական արարողություններում օգտագործվող արտադրանք,
- e. Թիումերսալ պարունակող պատվաստանյութեր.

Մաս I. 4-րդ հոդվածի 1-ին պարբերության ենթակա արտադրանք

Մերկուրիի հավելիչներով արտադրանք	Օրը, որից հետո չի թույլատրվում հիշյալ արտադրանքի թողարկումը, ներկրումը կամ արտահանումը /դադարեցման օրը/
Մարտկոցներ, բացառությամբ կոճակային ցինկի և արծաթի օքսիդի մարտկոցների, որոնցում մերկուրիի պարունակությունը >2% է, կոճակային ցինկե օդային մարտկոցներ, որոնցում մերկուրիի պարունակությունը >2% է :	2020
Անջատիչներ և ռելեններ, բացառությամբ շատ բարձր ճշգրտության կարողության և կորստի չափիչ կամրջակների և բարձր ռադիո հաճախականության անջատիչների և ռելենների մոնիտորինգահսկիչ գործիքների, որոնց մերկուրիի առավելագույն պարունակությունը 20 մգ է մեկ կամրջակի, անջատիչի կամ ռելեի հաշվով:	2020
Կոմպակտ ցերեկային լուսային լամպեր (CFL-ներ) ընդհանուր լուսավորության համար, որոնք ≤ 30 վատտ են և որոնցում մերկուրիի պարունակությունը գերազանցում է 5մգ՝ լամպի մեկ այրիչի հաշվով	2020
Գծային ցերեկային լույսեր (LFL-ներ) ընդհանուր լուսավորության համար. ա. Եռաժապավեն ֆոսֆոր <60 վատտ, որում մերկուրիի պարունակությունը 5մգ է՝ մեկ լամպի հաշվով, բ. Հալոֆոսֆատային ֆոսֆոր ≤ 40 վատտ, որի մերկուրիի պարունակությունը գերազանցում է 10 մգ՝ մեկ լամպի հաշվով	2020
Բարձր ճնշման մերկուրիի շոգելամպեր (HPMV) ընդհանուր լուսավորության համար	2020

Մերկուրին սառը կաթոդային ցերեկային լույսի լամպերում և արտաքին էլեկտրոդով ցերեկային լույսի լամպերում (CCFL և EEFL) էլեկտրոնային դիսփլեյների համար ա. կարճ (≤ 500 մմ), որի մերկուրիի պարունակությունը գերազանցում է 3,5 մգ մեկ լամպի հաշվով բ. միջին երկարության (> 500 մմ և $\leq 1\ 500$ մմ), որի մերկուրիի պարունակությունը գերազանցում է 5 մգ մեկ լամպի հաշվով գ. երկար ($> 1\ 500$ մմ)՝ մերկուրիի պարունակությունը գերազանցում է 13 մգ մեկ լամպի հաշվով	2020
Կոսմետիկ միջոցներ /մերկուրիի պարունակությունը 1պպմ-ից ավելի է/, այդ թվում՝ մաշկը բացացնող օճառներ և կրեմներ՝ չներառելով աչքի շրջանի կոսմետիկան, որտեղ մերկուրին օգտագործվում է որպես պահպանիչ, այլ ոչ՝ ազդող միջոց և առկա են անվտանգ փոխարինող պահպանիչ միջոցներ ¹	2020
Վնասատուների դեմ պայքարի միջոցներ, մոլախոտերի դեմ պայքարի միջոցներ և հականեխիչ միջոցներ	2020
Ստորև թվարկված ոչ էլեկտրոնային չափիչ սարքավորումները, բացառությամբ ոչ էլեկտրոնային չափիչ սարքավորումների՝ տեղադրված մեծածավալ սարքավորումներում կամ նրանց, որոնք օգտագործվում են բարձր ճշգրտության չափումների համար, եթե չկան մերկուրի չպարունակող պիտանի այլընտրանքներ՝ ա. բարոմետրեր բ. հիդրոմետրեր գ. մանոմետրեր դ. ջերմաչափեր ե. սֆիգմոմանոմետրեր	2020

Մաս II. 4-րդ հոդվածի 3-ին պարբերության ենթակա արտադրանք

Մերկուրիի հավելիչներով արտադրանք	Դրույթներ
Ատամնաբուժական խառնուրդ	<p>Ատամնաբուժական խառնուրդի օգտագործման դադարեցման ուղղությամբ՝ Կողմի ձեռնարկելիք միջոցները հաշվի են առնում Կողմի ներքին հանգամանքները և համապատասխան միջազգային ուղղությունները և ներառում երկու կամ ավելի միջոցներ հետևյալ ցանկից.</p> <ul style="list-style-type: none"> i. Դնել ազգային նպատակներ ատամի կարիեսի կանխարգելման նպատակով և առողջության խթանում՝ դրանով իսկ նվազեցնելով ատամի վերականգնման անհրաժեշտությունը, ii. Դնել ազգային նպատակներ՝ նվազագույնի հասցնելու դրա օգտագործումը, iii. Խթանել ծախսարդյունավետ և կլինիկական տեսանկյունից արդյունավետ մերկուրի չպարունակող այլընտրանքներ ատամի վերականգնման համար iv. Խթանել ատամի վերականգնման մերկուրի չպարունակող որակյալ գիտահետազոտական և

¹ Նպատակ և է չ ն եր առ ե լ ա յ ն կ ո ս մ ե տ ի կ մ ի ջ ո ճ ն եր ը ,
օ ճ առ ն եր ը կ ա մ կ ր ե մ ն եր ը , ո Ր ո ն ք պ ա Ր ո լ ն ա կ ո լ մ ե ն
մ եր կ ո լ Ր ի ի հ ե տ ք ա յ ի ն վ ա Ր ա կ ի չ ն եր :

	<p>ուսումնական գործունեություն,</p> <p>v. Խրախուսել ներկայացուցչական մասնագիտական կազմակերպություններին և ատամնաբուժական դպրոցներին կրթելու և վերապատրաստելու պրոֆեսիոնալ ատամնաբույժներ և ուսանողներ ատամի վերականգնման մերկուրի չպարունակող այլընտրանքներ օգտագործելու և կառավարման լավագույն գործելակարգեր խթանելու ոլորտում,</p> <p>vi. Ապաքաջալերել ապահովագրական քաղաքականություններ և ծրագրեր որոնք կողմ են ատամնաբուժական խառնուրդի կիրառությանը ի վնաս մերկուրի չպարունակող վերականգնման,</p> <p>vii. Խրախուսել ապահովագրական քաղաքականություններ և ծրագրեր, որոնք կողմ են ատամնաբուժական խառնուրդի կիրառության որակյալ այլընտրանքներին,</p> <p>viii. Մահմանափակել ատամնաբուժական խառնուրդի կիրառությունը վերջինիս կապուլացված ձևով</p> <p>ix. Խթանել ատամնաբուժության ոլորտում լավագույն բնապահպանական գործելակարգերի կիրառմանը՝ նվազեցնելու մերկուրիի և մերկուրիի միացությունների արտանետումները հողի ու ջրի մեջ:</p>
--	--

Հավելված Բ

Արտադրական գործընթացներ, որոնցում օգտագործվում են մերկուրի կամ մերկուրիի միացություններ

Մաս I. 5-րդ հոդվածի 2-րդ պարբերության ենթակա գործընթացներ

Մերկուրի կամ մերկուրիի միացություններ օգտագործող արտադրական գործընթացներ	Դադարեցման ամսաթիվ
Քլորակալիի արտադրություն	2025
Ացետալիդի արտադրություն, որտեղ որպես կատալիզատոր օգտագործվում են մերկուրի կամ մերկուրիի միացություններ	2018

Մաս II. 5-րդ հոդվածի 3-րդ պարբերության ենթակա գործընթացներ

Մերկուրի կիրառող գործընթացներ	Դրույթներ
Վինիլ քլորիդի մոնոմեր արտադրություն	<p>Կողմերի ձեռնարկելիք միջոցները ներառում են /սակայն չեն սահմանափակվում/</p> <ul style="list-style-type: none"> i. Կրճատել մերկուրիի օգտագործումը մեկ միավորին ընկած արտադրանքի հաշվով 50% մինչև 2020՝ 2010-ի օգտագործման համեմատ, ii. Խթանել միջոցներ՝ կրճատելու առաջնային հանքահանությունից մերկուրիի կիրառությունը, iii. Ձեռնարկել միջոցներ՝ կրճատելու շրջակա միջավայր մերկուրիի արտանետումներն ու արտազատումները, iv. Օժանդակել գիտահետազոտական և զարգացման միջոցառումներին մերկուրի չպարունակող կատալիզատորների և գործընթացների առնչությամբ, v. Չթույլատրել մերկուրիի օգտագործումը հինգ տարի հետո այն բանից, երբ Կողմերի խորհրդաժողովը սահմանել է, որ մերկուրի չպարունակող կատալիզատորները՝ հիմնված ներկայիս գործընթացների վրա, դարձել են տեխնիկապես և տնտեսապես պիտանի, vi. Ձեկուցել Կողմերի խորհրդաժողովին այլընտրանքներ մշակելու և/կամ հայտնաբերելու ջանքերի և 21-րդ հոդվածի համաձայն մերկուրիի օգտագործման դադարեցման մասին:
Սողիումի կամ պոտասիումի մեթիլատ կամ էթիլատ	<p>Կողմերի ձեռնարկելիք միջոցները ներառում են /սակայն չեն սահմանափակվում/</p> <ul style="list-style-type: none"> i. Միջոցներ՝ նվազեցնելու մերկուրիի կիրառությունը՝ նպատակ ունենալով դադարեցնել այդ կիրառությունը հնարավորինս արագ և սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո 10 տարվա ընթացքում, ii. Կրճատել արտազատումներն ու արտանետումները մեկ միավոր արտադրանքի հաշվարկով 50%-ով մինչև 2020թ.՝ 2010-ի համեմատ, iii. Արգելել առաջնային հանքահանությունից թարմ մերկուրիի օգտագործումը, iv. Աջակցել հետազոտություններին և զարգացմանը մերկուրի չպարունակող գործընթացների առնչությամբ,

	<p>v. Չթույլատրել մերկուրիի օգտագործումը հինգ տարի հետո այն բանից, երբ Կողմերի խորհրդաժողովը սահմանել է, որ մերկուրի չպարունակող կատալիզատորները՝ հիմնված ներկայիս գործընթացների վրա, դարձել են տեխնիկապես և տնտեսապես պիտանի,</p> <p>vi. Ձեկուցել Կողմերի խորհրդաժողովին այլընտրանքներ մշակելու և/կամ հայտնաբերելու ջանքերի և 21-րդ հոդվածի համաձայն մերկուրիի օգտագործման դադարեցման մասին:</p>
<p>Պոլիուրեթանի արտադրություն՝ օգտագործելով մերկուրի պարունակող կատալիզատորներ</p>	<p>Կողմերի ձեռնարկելիք միջոցները ներառում են /սակայն չեն սահմանափակվում/</p> <p>i. Ձեռնարկել միջոցներ՝ նվազեցնելու մերկուրիի կիրառությունը՝ նպատակ ունենալով հնարավորինս արագ դադարեցնել այդ կիրառությունը Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո 10 տարվա ընթացքում,</p> <p>ii. Ձեռնարկել միջոցներ՝ կրճատելու առաջնային հանքահանությունից մերկուրիի կիրառությունը,</p> <p>iii. Ձեռնարկել միջոցներ՝ կրճատելու շրջակա միջավայր մերկուրիի արտանետումներն ու արտազատումները,</p> <p>iv. Խրախուսել հետազոտություններին և զարգացմանը մերկուրի չպարունակող կատալիզատորների և գործընթացների առնչությամբ,</p> <p>v. Ձեկուցել Կողմերի խորհրդաժողովին այլընտրանքներ մշակելու և/կամ հայտնաբերելու ջանքերի և 21-րդ հոդվածի համաձայն մերկուրիի օգտագործման դադարեցման մասին:</p> <p>5-րդ հոդվածի 6-րդ պարբերությունը չի վերաբերում այս արտադրական գործընթացին:</p>

Հավելված Գ

Արհեստագործական և փոքրածավալ ոսկու հանքահանություն
Գործողությունների ազգային ծրագրեր

1. 7-րդ հոդվածի 3-րդ պարբերության դրույթներին ենթակա յուրաքանչյուր Կողմ գործողությունների ազգային ծրագրում ներառում է.
 - a. Ազգային նպատակներ և կրճատման թիրախներ,
 - b. Գործողություններ՝ վերացնելու.
 - i. Ամբողջական երկաթաքարի խառնուրդները,
 - ii. Բնակելի տարածքներում խառնուրդների բաց այրում և
 - iii. Ցիանիդի մոխրաջրումը նստվածքներում, երկաթաքարում կամ պոչամբարներում, որոնց ավելացվել է մերկուրի՝ առանց առաջին հերթին հեռացնելու մերկուրին,
 - c. Քայլեր՝ հեշտացնելու ոսկու արհեստագործական և փոքրածավալ հանքահանության ֆորմալիզացիան կամ կարգավորումը,
 - d. Օգտագործված մերկուրիի քանակների և կիրառված գործելակարգերի բազային հաշվարկներ սեփական տարածքում ոսկու արհեստագործական և փոքրածավալ հանքահանության և մշակման ոլորտում,
 - e. Ստրատեգիաներ՝ խթանելու մերկուրիի արտանետումների և արտագատումների կրճատումը և մերկուրիի ռիսկերը ոսկու արհեստագործական և փոքրածավալ հանքահանության և մշակման ոլորտում, այդ թվում՝ մերկուրի չպարունակող մեթոդներով,
 - f. Ստրատեգիաներ՝ կառավարելու առևտուրը և խթանելու մերկուրիի և մերկուրիի միացությունների խտորումը օտարերկրյա և ներպետական աղբյուրներից՝ օգտագործելու ոսկու արհեստագործական և փոքրածավալ հանքահանության և մշակման մեջ,
 - g. Ստրատեգիաներ՝ ներառելու շահագրգիռ կողմերին գործողությունների ազգային ծրագրի իրականացման և շարունակական մշակման գործում,
 - h. Հանրային առողջապահության ստրատեգիա ոսկու արհեստագործական և փոքրածավալ հանքափորներին և նրանց համայքներին մերկուրիից պաշտպանելու ոլորտում: Այդպիսի ստրատեգիան, ի թիվս այլ հարցերի, պետք է ներառի առողջապահական տվյալների հավաքում, առողջապահության ոլորտի աշխատակիցների համար վերապատրաստում և իրազեկության բարձրացում առողջապահական օջախների միջոցով,
 - i. Ստրատեգիաներ՝ կանխարգելելու խոցելի բնակչության, մասնավորապես՝ երեխաների և մայրանալու տարիքի կանանց, այդ թվում՝ հղի կանանց խոցելիությունը ոսկու արհեստագործական և փոքրածավալ հանքահանության ոլորտում մերկուրիի օգտագործումից,

- j. Ստրատեգիաներ տրամադրելու տեղեկատվություն ոսկու արհեստագործ և փոքրածավալ հանքափորներին և տուժած համայնքներին և
 - k. Գործողությունների ազգային ծրագրի իրականացման ժամանակացույցը:
2. Կողմերից յուրաքանչյուրը կարող է գործողությունների իր ծրագրում ներառել լրացուցիչ ստրատեգիաներ՝ իր նպատակներին հասնելու համար, այդ թվում՝ մերկուրի չպարունակող ոսկու արհեստագործական և փոքրածավալ հանքահանության չափորոշիչների և շուկայի վրա հիմնված մեխանիզմների և մարքեթինգային գործիքների կիրառության կամ ներդրման վերաբերյալ:

Հավելված Դ

Մթնոլորտ մերկուրիի և մերկուրիի միացությունների արտանետումների սկզբնաղբյուրների ցանկը

Մկզբնադրյունների դասերը.

Ածուխով այրվող էլեկտրակայաններ

Ածուխով այրվող արդյունաբերական կաթսաներ

Հալեցման և այրման գործընթացներ, որոնք կիրառվում են գունավոր

մետաղների արտադրության մեջ²

Թափոնների այրման հարմարություններ

Ցեմենտի խարամի արտադրության հարմարություններ

Հավելված Ե

Արբիտրաժ և հաշտեցման ընթացակարգեր

² Ս ու յ ն Յ ա վ ե լ վ ա ծ ի ն պատակ ն եր ի ց ե լ ն ե լ ո վ` «գ ու ն ա վ ո թ ը մ ե տ ա ղ ն եր ը «վ եր աբ եր ու մ ե ն ց ի ն կ ի ն , պ ղ ն ձ ի ն և ար ղ յ ու ն աբ եր ա կ ա ն ո ս կ ու ն :

Մաս I. Արբիտրաժի ընթացակարգ

Սույն Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 2 (ա) պարբերության նպատակներից ելնելով՝ արբիտրաժի ընթացակարգը հետևյալն է.

Հոդված 1

1. Կողմը կարող է նախաձեռնել արբիտրաժի ընթացակարգ՝ համաձայն Կոնվենցիայի 25-րդ հոդվածի վեճի մյուս կողմին կամ կողմերին հասցեագրված գրավոր ծանուցման հիման վրա: Ծանուցումը պետք է ուղեկցվի պահանջի մասին հայտարարագրով, ինչպես նաև այն հիմնավորող որևէ փաստաթղթով: Այդօրինակ ծանուցումը նկարագրում է արբիտրաժի առարկան և ներառում, մասնավորապես, սույն Կոնվենցիայի այն հոդվածները, որոնց մեկնաբանությունը կամ կիրառությունը հարցի տակ են:
2. Դիմող կողմը տեղեկացնում է Քարտուղարությանը, որ վեճը հանձնում է արբիտրաժի՝ համաձայն սույն Կոնվենցիայի 25-րդ հոդվածի: Ծանուցումն ուղեկցվում է դիմող կողմի գրավոր ծանուցմամբ, պահանջի հայտարարագրով, ինչպես նաև վերոնշյալ 1-ի պարբերությամբ վկայակոչված հիմնավորող փաստաթղթերով: Քարտուղարությունն այս ողջ տեղեկատվությունն ուղարկում է բոլոր Կողմերին:

Հոդված 2

1. Եթե վեճը, 1-ին հոդվածի համաձայն, հանձնվել է արբիտրաժի, կազմավորվում է արբիտրաժային դատարան: Այն կազմված է երեք անդամներից:
2. Վեճի կողմերից յուրաքանչյուրը նշանակում է մեկ արբիտր, և այդ եղանակով նշանակված երկու արբիտրները համաձայնությամբ նշանակում են երրորդ արբիտրին, որը դառնում է դատարանի Նախագահը: Երկուսից ավելի կողմերի միջև եղած վեճերի դեպքում, նույն շահը հետապնդող կողմերը համատեղ համաձայնությամբ նշանակում են մեկ արբիտր: Դատարանի Նախագահը չի կարող լինել վեճի կողմերից որևէ մեկի քաղաքացի կամ իր մշտական բնակության վայրն ունենալ այդ կողմերից որևէ մեկի տարածքում, կամ աշխատել նրանցից որևէ մեկի մոտ կամ որևէ այլ կարգավիճակով զբաղվել այդ գործով:
3. Թափուր տեղերը լրացվում են նախնական նշանակման համար սահմանված կարգով:

Հոդված 3

1. Եթե վեճի կողմերից մեկն արբիտր չի նշանակում արբիտրաժի մասին ծանուցումը պատասխանող կողմի ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում, մյուս կողմը Միավորված ազգերի Գլխավոր

քարտուղարին ծանուցում է այդ մասին, և վերջինս կողմի խնդրանքով նշանակում է Նախագահին երկամսյա ժամկետում:

2. Եթե արբիտրաժային դատարանի Նախագահը նշանակման օրվանից հետո երկու ամսվա ընթացքում չի նշանակում երկրորդ արբիտրին, Միավորված ազգերի Գլխավոր քարտուղարը նշանակում է Նախագահին երկամսյա ժամկետում:

Հոդված 4

Արբիտրաժային դատարանն ընդունում է իր որոշումները սույն Կոնվենցիայի և միջազգային իրավունքի դրույթների համաձայն:

Հոդված 5

Եթե վեճի կողմերն այլ բան չեն պայմանավորվում, արբիտրաժային դատարանը սահմանում է ընթացակարգի իր սեփական կանոնները:

Հոդված 6

Արբիտրաժային դատարանը կարող է վեճի կողմերից մեկի խնդրանքով առաջարկել պաշտպանության էական միջանկյալ միջոցներ:

Հոդված 7

Վեճի կողմերը հեշտացնում են արբիտրաժային դատարանի աշխատանքը և, մասնավորապես, իրենց տրամադրության տակ եղած միջոցներն օգտագործելու միջոցով.

ա. տրամադրում բոլոր համապատասխան փաստաթղթերը, տեղեկությունները և հարմարությունները և

բ. լիազորում դատարանին, ըստ անհրաժեշտության, կանչելու վկաներ կամ փորձագետներ և ստանալու վկայություն նրանցից:

Հոդված 8

Վեճի կողմերը և արբիտրները պարտավոր են պահպանել խորհրդապահական կարգով ստացված որևէ տեղեկատվության կամ փաստաթղթի գաղտնիությունը արբիտրաժային դատարանի ողջ ընթացակարգի ժամանակ:

Հոդված 9

Եթե արբիտրաժային դատարանն այլ բան չի սահմանում՝ ելնելով գործի առանձնահատուկ հանգամանքներից, դատարանի ծախսերը հոգում են վեճի կողմերը հավասար մասնաբաժիններով: Դատարանը կատարում է իր բոլոր ծախսերի հաշվառում և կողմերին ներկայացնում դրանց վերաբերյալ վերջնական հաշվետվություն:

Հոդված 10

Կողմը, որն իրավական բնույթի շահ ունի վեճի առարկա հանդիսացող պահանջի մեջ, որի վրա ազդելու է որոշումը, կարող է արբիտրաժային դատարանի համաձայնությամբ միջամտել ընթացակարգին:

Հոդված 11

Արբիտրաժային դատարանը կարող է լսել և որոշում կայացնել այն հակընդդեմ պահանջների վերաբերյալ, որոնք ուղղակիորեն բխում են վեճի առարկայից:

Հոդված 12

Արբիտրաժային դատարանի որոշումները՝ դատավարական և նյութական իրավունքի վերաբերյալ, կարող են ընդունվել վերջինիս անդամների ձայների մեծամասնությամբ:

Հոդված 13

1. Եթե վեճի կողմերից որևէ մեկը չի ներկայանում արբիտրաժային դատարան կամ չի պաշտպանում իրեն, մյուս կողմը կարող է խնդրել, որ դատարանը շարունակի դատավարությունը և որոշում կայացնի: Կողմի բացակայությունը կամ չպաշտպանվելը արգելք չէ դատավարության համար:
2. Նախքան վերջնական որոշում կայացնելը արբիտրաժային դատարանը պետք է ներքին համոզմունք ձևավորի այն մասին, որ պահանջը հիմնավոր է թե փաստական և թե իրավական տեսանկյունից:

Հոդված 14

Արբիտրաժային դատարանը կայացնում է իր վերջնական որոշումն իր լիարժեք կազմավորումից հետո հինգ ամսվա ընթացքում, եթե չի գտնում, որ ահրաժեշտ է երկարաձգել իր տրամադրության տակ եղած ժամկետը ոչ ավելի քան ևս հինգ ամսով:

Հոդված 15

Արբիտրաժային դատարանի վերջնական որոշումը սահմանափակվում է վեճի առարկայով և պետք է լինի պատճառաբանված: Այն ներառում է այն անդամների անունները, ովքեր մասնակցել են և վերջնական որոշման ամսաթիվը: Դատարանի անդամներից յուրաքանչյուրը կարող է վերջնական որոշմանը կցել առանձին կամ հակառակ կարծիք:

Հոդված 16

Վերջնական որոշումը պարտադիր է վեճի կողմերի համար: Վերջնական որոշմամբ տրված սույն Կոնվենցիայի մեկնաբանությունը նաև պարտադիր է 10-րդ հոդվածի համաձայն միջամտած Կողմի համար այնքանով, որքանով այն առնչվում է այնպիսի հարցերի, որոնց առնչությամբ Կողմը միջամտել է: Վերջնական որոշումը բողոքարկման

ենթակա չէ, եթե վեճի կողմերը նախապես համաձայնության չեն եկել բողոքարկման ընթացակարգի շուրջ:

Հոդված 17

Եթե կողմերի միջև, որոնց վրա տարածվում է վերջնական որոշումը համաձայն 16-րդ հոդվածի, կա տարաձայնություն վերջնական որոշման մեկնաբանության կամ կիրարկման կարգի վերաբերյալ, նրանցից յուրաքանչյուրը կարող է այն ներկայացնել վերջնական որոշման համար այն արբիտրաժային դատարանին, որը կայացրել է այն:

Մաս II. Հաշտեցման ընթացակարգ

Հոդված 1

Վեճի կողմի խնդրանքը հաշտեցման հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ, համաձայն սույն Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 6-րդ պարբերության, գրավոր ներկայացվում է Քարտուղարությանը՝ պատճենը վեճի մյուս կողմին կամ կողմերին: Քարտուղարությունն անմիջապես պատշաճ կարգով ծանուցում է բոլոր Կողմերին:

Հոդված 2

1. Եթե վեճի կողմերն այլ բանի շուրջ համաձայնության չեն գալիս, հաշտեցման հանձնաժողովը կազմավորվում է երեք անդամից, որոնց նշանակում են շահագրգիռ կողմերը և Նախագահողից, որին ընտրում են հանձնաժողովի անդամները:
2. Երկուսից ավելի կողմերի միջև ծագած վեճերը, միևնույն շահը հետապնդող կողմերը նշանակում են հանձնաժողովի իրենց անդամին համատեղ:

Հոդված 3

Եթե 1-ին հոդվածում նախատեսված գրավոր խնդրանքը Քարտուղարության կողմից ստացվելուց հետո երկու ամսվա ընթացքում կողմերը որևէ մեկին չեն նշանակում, Միավորված ազգերի Գլխավոր քարտուղարը երկամսյա ժամկետում կատարում է հիշյալ նշանակումը:

Հոդված 4

Եթե հաշտեցման հանձնաժողովի Նախագահողը չի ընտրվում հանձնաժողովի երկրորդ անդամի նշանակումից հետո երկամսյա ժամկետում, Միավորված ազգերի Գլխավոր քարտուղարը վեճի կողմերից որևէ մեկի խնդրանքով երկամսյա ժամկետում նշանակում է Նախագահող:

Հոդված 5

Հաշտեցման հանձնաժողովն անկախ և անկողմնակալ եղանակով աջակցում է վեճի կողմերին բարեկամական կարգավորման հասնելու՝ նրանց ջանքերում:

Հոդված 6

1. Հաշտեցման հանձնաժողովը կարող է վարել հաշտեցման ընթացակարգն այնպես, ինչպես որ ինքը ճիշտ է համարում՝ լիարժեքորեն հաշվի առնելով գործի հանգամանքները և այն տեսակետները, որ վեճի կողմերը կարող են արտահայտել, այդ թվում՝ արագ կարգավորման վերաբերյալ խնդրանքները: Եթե կողմերն այլ բան չեն պայմանավորվում, այն կարող է անհրաժեշտության պարագայում ընդունել իր սեփական կանոնակարգը:
2. Հաշտեցման հանձնաժողովը կարող է ընթացակարգի ցանկացած փուլում անել առաջարկություններ վեճի կարգավորման վերաբերյալ:

Հոդված 7

Վեճի կողմերը համագործակցում են հաշտեցման հանձնաժողովի հետ: Մասնավորապես՝ նրանք փորձում են կատարել հանձնաժողովի խնդրանքները գրավոր նյութեր, ապացույցներ ներկայացնելու և հանդիպումներին մասնակցելու վերաբերյալ: Կողմերը և հաշտեցման հանձնաժողովի անդամները պարտավոր են պահպանել խորհրդապահական կարգով հանձնաժողովի ընթացակարգի համար ստացված ցանկացած տեղեկատվության կամ փաստաթղթի գաղտնիությունը:

Հոդված 8

Հաշտեցման հանձնաժողովն իր որոշումները կայացնում է իր անդամների ձայների մեծամասնությամբ:

Հոդված 9

Եթե վեճն արդեն իսկ չի լուծվել հաշտեցման հանձնաժողովը կազմում է զեկույց վեճի կարգավորմանը վերաբերող առաջարկություններով իր լիարժեք կազմավորումից հետո տասներկու ամսից ոչ ուշ, որոնք վեճի կողմերը բարեխղճորեն քննության են առնում:

Հոդված 10

Ցանկացած տարաձայնություն այն մասին, թե արդյոք հաշտեցման հանձնաժողովն իրավասու է քննության առնել իրեն հանձնած հարցը, որոշվում է հանձնաժողովի կողմից:

Հոդված 11

Եթե այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել, հաշտեցման հանձնաժողովի հետ կապված ծախսերը հոգում են վեճի կողմերը հավասար մասնաբաժիններով: Հանձնաժողովը վարում է իր բոլոր ծախսերի հաշվառում և դրանց վերաբերյալ կողմերին ներկայացնում վերջնական հաշվետվություն:

DRAFT